

1755

9(47.925

4-26

2004

9 (97-925)

Ա-26

САЛЪ - МАНЪ

ՍՍԼ-ՄԱՆ

Генералъ-адъютантъ М. Т. ПОРИСЪ-МЕЛНКОВЪ

ՌՈՒՍ-ՏԱՋԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ

1877—1878 թ.

Ե Ի Ն Ր Ա

ՀԱՅԱԶԳԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ա.

ԳԵՆԵՐԱԼ-ԱԴԻԻՏԱՆՏ

ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ

(Պատերազմական բեմի գլխավոր հերոսների նկարներով
եւ նրա սխեմասիկ փառեգով)




Երկրորդ տպագրութիւն

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ե. Աղանեանի, Պոլից. 7

1915



2012

38539 - wh.



(10805-57)

21736.60

illegible purple markings

illegible purple markings



Թիւրքաց ղէմ Գործող Կորպուսի
հրամանատար
Գեներալ-ադիւտանտ, Կաւալերիայի զենեակ
ՄԻՔԱՅԷԼ ԼՕՌԻՍ-ՄԷԼԻՔԵԱՆ:

Ա Ռ Ա Ջ Ա Ռ Ա Ն

Ի նկատի ունենալով՝

Այն լարւած հետաքրքրութիւնը, որ ամբողջ աշխարհում առաջ է բերել ներկայ համաեւրոպական պատերազմը, Տաճիկ կառավարութեան բռնած դիրքը դէպի պատերազմն ու կուռղ կողմերը,

Մեր հայրենիքի և ժողովրդի շատ հասկանալի շահագրգռումը գալիք օրերի դիմաց՝ մեր սահմանագծի մօտ և նրա այն կողմում,

Այն դեռ ևս թարմ ու կենդանի յիշատակներն ու յիշողութիւնները, որ, բերնէ բերան, սերնդից սերունդ անցնելով, ապրում են մեր երկրում և ժողովրդի լայն խաւերում, 1877—1878 թւականների ռուս-տաճկական պատերազմի և նրան մեր սահմաններում ղեկավարող հայ նշանաւոր զօրապետների ու պատերազմական հերոսների մասին և, վերջապէս, որ այդ շրջանի ու անձանց մասին հայերէն լեզուով չկայ ոչ մի գրւածք՝ նոյն իսկ համառօտ կենսագրականներ, որը մատչելի լինէր ժողովրդական լայն խաւերին,

Մենք տալիս ենք մեր այս համեստ աշխատութիւնը, որին որպէս աղբիւրներ ծառայել են՝ մի շարք պաշտօնական վաւերագրեր և տպւած աշխատութիւններ՝ մեծ մասամբ ռուսաց լեզուով:

Այս առաջին գրքին յաջորդելու են միւսները, պարունակելով ռուս բանակում անուն ստացած և իրանց

ուզմագիտական տաղանդով յայտնի հետևեալ հայազգի գեներալների ու զորապետների կենսագրութիւնները՝ գեներալ-ադիւտանտ Յ. Լազարևի, գեներալ-լէյտենանտ Ա. Տէր-Ղուկասովի, գեներալներ՝ Բ. Շելկովիչի և Յ. Ալ-խազովի: Յետագայում յոյս ունենք լոյս ընծայել հայազգի միւս նշանաւոր զորապետներ՝ Իշխան Մ. Արղութեան-երկայնաբազուկի, Իշխան Վ. Մադաթովի և Բէհբուլթեան Իշխանների կենսագրութիւնները:

Աղբիւրներ՝ այս աշխատութեան համար:

1) „Материалы для описанія Русско-Турецкой войны 1877—1878 г. г. на Кавказскомъ Малоазіатскомъ театрѣ“ I, II, III հատորներ: Составленъ въ Военно-Историческомъ Отдѣлѣ Штаба Кавказскаго Военнаго Округа, подъ редакціей Генералъ-Лейтенанта Чернявскаго. С. П. Б. 1904 г.

2) „Графъ Михаилъ Таріеловичъ Лорисъ-Меликовъ“. Тифлисъ. 1889 г.

3) „Война въ Турецкой Арменіи 1877—1879 г. г.“ Генералъ-маіора С. О. Кишмишева. С. П. Б. 1884 г.

4) „Осада и штурмъ Карса въ 1877 г.“ Гиппіусъ.

5) „Годъ на конѣ“. Шнеуръ. „Военное Обозрѣніе“ 1880 г. № 3.

6) „Война въ Малой Азіи въ 1877 г.“ Градовскій.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂ

1. Պատերազմի պատճառներն ու պատճառութիւնները

Մեզնից 38 տարի առաջ էր. ուսաց Ալեքսանդր Երկ-րորդ կայսեր թագաւորութեան օրերում. այդ պահին թիւրքիայում սուլթանական գահի վրայ բազմած էր Համիդը:

Այդ երկու պետութիւնների միջև յարաբերութիւնները, գնալով, սրւում, օր օրի վրայ աւելի և աւելի սպառնալից էին դառնում շնորհիւ այն բանի, որ թիւրքաց տիրապետութեան տակ գտնւող բոլոր, սերբ, չերնագորացի՝ սլաւօն ժողովուրդների վիճակը, Սուլթանի կառավարութեան վայրագութիւնների պատճառով, օր աւուր դառնում էր աւելի վատ, աւելի սոսկալի:

Յուզւում էր ուս ժողովրդի սիրաւ՝ մամուլը. բաշիբուզուկների և դրանցից վատ՝ թիւրք պաշտօնեաների գազանութիւնների նկարագիրն էր տալիս նա ու վրդովում ուս հասարակութեան բոլոր խաւերի խիղճն ու հանգրստութիւնը:

Ռուսաստանը այս բոլորի դիմաց այլ ևս անկարող էր լուակեաց հանդիսատեսի դերի մէջ մնալ:

Խաղաղութիւնը կախւած էր մազից. օր աւուր սպասւում էր պատերազմի յայտարարութեանը. և, լաւ գիտակցելով, որ նա անխուսափելի է, երկու կողմերն էլ վճռական օրը դիտմամբ ձգձգում էին՝ իրանց ոյժերը կենտրոնացնելու, ռազմամթերք, պաշար, ուտելիք ամբարելու առաջիկայ պատերազմի համար:

Այսպէս անցաւ 1876 թւականը և հասաւ 1877-ի գարունը: Ապրիլի 12-ին Ռուսաստանը հրատարակեց Բարձ-

րագոյն հրաման՝ որով թիւրք կառավարութեանը պատե-
րագմ էր յայտարարուում:

Ռուս զօրքը, բաժանուած երկու մեծ բանակների,
առաջ էր անցնում. մէկը՝ եւրոպական թիւրքիա, Մեծ
Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի գլխաւոր հրամանատարու-
թեամբ, միւսը՝ Ասիական թիւրքիայում՝ Անդրկովկասի
սահմաններում Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի հրա-
մանատարութեամբ:

Մեզ հետաքրքրողը այս վերջին բանակն է, մեր պա-
տերազմական թատերաբեմը, ուր վճուելու էր նաև հայ
ժողովրդի բաղադր և ուր հրապարակ եկան մի շարք հայ-
ազգի զօրապետներ, որոնք իրանց քաջութեամբ, խելքով
ու տաղանդով դարձան ուս բանակի և զինւորական ոյժի
պարծանքը՝ երևան հանելով միևնոյն ժամանակ և հայ
ազգի ռազմական ընդունակութիւնները նոր փայլով, նո-
րանոր ապացոյցներով:

Իեռ ևս պատերազմը չսկսած պարզ էր մի բան՝
ուս զօրքի քչութիւնը Անդրկովկասում, ուր սրա ընդհա-
նուր թիւը 66 հազարից այն կողմը չէր անցնում. դրանից
մօտ 20 հազարը զբաղւած էր Դաղստանում լեռնական-
ների ապստամբական շարժումների առաջն առնելու գոր-
ծով. մնում էր ընդամենը 46 հազար զօրք. սրա մի մասը
պէտք է գնար Սև-ծովի շրջան՝ Փոթիի մօտ պաշտպանե-
լու ուսաց սահմանը տաճկական զօրքից. և ահա մնաց-
եալ 35 հազարով Մեծ-Իշխանը պէտք է սկսէր ուս զօր-
քի յարձակողական գործունէութիւնը Անդրկովկասի օսմա-
նեան սահմաններում՝ Արգահանի, Օլթիի, Ղարսի, Կաղըզ-
ւանի դէմ, որոնք մեծ զօրքով ու դրա համեմատ ռազ-
մամթերքով ու թնդանօթներով պաշտպանում էին՝ մի
կողմից թիւրքաց սահմանակից սանջակները՝ և ապա
նրանց միջովնաև Արգրում տանող ճանապարհները: Մա-
նաւանդ սպառնալից էին Ղարսի ու Արգահանի բերդերը,

որոնք, իրենց բնական ու արհեստական մի շարք առաջ-
նակարգ ամրութիւններով, վերին ծայր դժւարացնելու էին
ուս զօրքի առաջխաղացումը:

Եւ ահա, որպէսզի հնար ունենայ իր բանակի ոյժը
աւելացնել, Մեծ-Իշխանը հնարաւոր գտաւ գործող զօրքի
մէջ ընդունել մօտ 10,000 հոգի տեղական ազգաբնակու-
թիւնից, որպէս կամաւոր միլիցիօներներ, որոնք՝ զինւած
և ձիաւորւած, մեծ օգնութիւն հասցրին ուս բանակին
պատերազմի ամբողջ ընթացքում: Այս միլիցիօներներից
կազմեցին հարիւրակներ, որոնք մեծ մասամբ ազգային
կնիք էին կրում. և այսպէս առաջացան՝ վրաց, հայոց,
դաղստանի, չեչենների, թուրքերի, քրդերի միլիցիօներա-
կան հարիւրակներ՝ իրենց հարիւրապետներով, նշանակ-
ւած մեծ մասամբ ուս զօրքի մէջ ծառայած սպաներից:

Բացի հարկաւոր զօրքի պակասութիւնից, կար և մի
ուրիշ դժւարութիւն. սումը յանձնել ուս զօրքի ու դրօշի
պատիւը. սվ կարող էր արդարացնել այն յոյսերը, որ
դրւում են պատերազմների ժամանակ զօրքերի իրական
հրամանատարների վրայ, որոնց փորձառութիւնից, հմտու-
թիւնից ու տաղանդից է կախւած լինում մեծ մասամբ
պատերազմի բաղտի այս կամ այն կողմ շուռ գալը:

Եւ այսպէս Կովկասեան Փոխարքայ Մեծ-Իշխանի առաջ
դրւած այդ երկու հարցերից առաջինը՝ իր զօրքերի ոյժի
աւելացումը, կարող էր ուշ թէ շուտ իր լուծումը գտնել
Ռուսաստանից նորանոր զօրաբաժիններ հասցնելով, միւսը՝
զօրաբանակի հրամանատարի ընտրութիւնը, դժւարանում
էր շնորհիւ զանազան հանգամանքների...

Սակայն այս հարցը ևս լուծեց ամենայաջող կերպով.
ընտրութիւնն ընկաւ Գեներալ-Ադիւտանտ Միխայիլ Տա-
րիելովիչ Լօրիս-Մելիքովի վրայ, միակ անձի, որը, թէ իր
անցեալով, թէ վարչական ու ռազմական ընդունակու-
թեամբ և երկիրն ու թշնամուն մօտիկից ճանաչելով, կա-

րող էր գլխովին արդարացնել կովկասեան զօրաբանակի Գործող Կորպուսի հրամանատարի պատասխանատու և բարձր պաշտօնը:

Եւ ահա 1876 թւի նոյեմբերի 11-ին գեներալ-ադիւտանտ Լօրիս-Մելիքով Բարձրագոյն հրամանով նշանակուում է օսմանցիների դէմ պատերազմող կովկասեան ռուս զօրքի գործող կորպուսի հրամանատար: Այս նշանակումը մեծ ուրախութիւն է պատճառում թէ ռուս զօրքին ու նրա շարքում գտնուած սպաներին և թէ կովկասի ամբողջ ազգաբնակչութեանը: Լիազօրուած զօրապետի ամենալայն իրաւունքներով, Լօրիսը ստանձնում է իր նոր պաշտօնը և անցնում գործի գլուխ, ունենալով իրեն դիմաց օսմանեան 4-րդ բանակը՝ կազմուած 40 հազար հոգուց և մօտ 30 հազար բերդապահ զինուորներ Լարսում ու Արդահանում՝ գլխաւոր հրամանատարութեամբ թիւրքաց յայտնի ռազմագէտ Մուխթար փաշայի: Այդ զօրքից դուրս Մուխթար փաշան Կազմեց քրդերից, չերքեզներից և դարափափախներից 20 հազարի չափ կամաւորներ, որոնք պատերազմի ամբողջ ընթացքում մեծ անհանգստութիւն էին պատճառում ռուս զօրքին և, ասպատակելով ու թալանելով ռուսաց սահմանակից գաւառները, ազգաբնակչութեան համար դարձան բառի բուն մտքով պատուհասներ:

2. Լօրիս-Մելիքովը մինչեւ 1877-1878-ի պատերազմը

Միջայել Լօրիս-Մելիքով իր ծագումով Լօուայ հայ մէլիքներիցն էր. նա ծնւել էր 1826 թւին. շատ փոքր հասակից ուղարկւել է ռուսաց մայրաքաղաք, Պետօգրադ ուր մտել էր Նիկօլաևսկիյ Հեծելազօրային Զինուորական դպրոց: Տասնևութ տարեկան հասակում աւարտելով իր ուսումը, իսկոյն ռուսաց ամենաբնօրն զօրամասում՝ գվարդիայում ստանում է պորուչիկի աստիճան և 22 տարեկան գալիս է Թիֆլիզ ու նշանակուում կովկասեան կոր-

պուսի հրամանատար իշխան Վօրօնցովի մօտ՝ որպէս առանձին յանձնարարութիւնների սպայ:

Այդ ժամանակները ռուսաց զօրքի ամենադժւարին շրջանն էր: Կովկասեան լեռնականներից՝ չեչեններն ու չերքեզները, միացնելով իրանց հետ միւս մանր ազգերին ու ցեղերին, գլուխ էին բարձրացրել ռուս տիրապետութեան դէմ և վճռել ինչ գնով և լինի դուրս քշել ռուսներին իրենց հայրենի լեռներից:

Ապստամբների գլուխ էր անցել Իմամ Ղազի-Մօլլան, որը Դաղստանի և Թերէքի անառիկ կիրճերում, ժողոված իր շուրջը տասնհազարի չափ լաւ զինուած ոյժեր, ընկած ռուս զօրքի վրայ, անակնկալ ջարդեր էր տալիս մէկը միւսի ետևից:

Ռուս կառավարութիւնը անընդհատ նորանոր զօրքեր ու թնդանօթներ էր ուղարկում դրանց դէմ. վերջապէս նրան աջողեց պաշարել Դաղստանը, ջարդել Ղազի-Մօլլային, որը և կռիւներից մէկում սպանւեց: Սակայն սրա մահով ապստամբութիւնը չի վերջանում. Ղազի-Մօլլային յաջորդում է նրանից ոչ պակաս քաջ ու համարձակ Իմամ Համգաթ-Բէգը, իսկ սրանից յետոյ հրապարակ է գալիս Զեչնիի պարծանք Իմամ Շամիլը, որը, միացնելով իր ոյժերին Զեչնի և Դաղստանի բոլոր իշխաններին, անհաշտ կռիւ է յայտարարում ռուսներին: Շամիլի հետ կռիւը տևեց ամբողջ քսան և հինգ տարի. ռուս զօրքը անթիւ գոհեր տւեց, մինչև որ, վերջապէս, աջողեց նրան կոտրել Շամիլի յամառութիւնը և վերջինիս իշխ. Բարեատինսկուն անձնատուր լինելովը, առժամանակ ճնշեց ապստամբութիւնը:

Ահա հէնց այս պատերազմաբեմ է ուղարկուում երիտասարդ Լօրիսը: Շամիլի դէմ մղուած մի շարք կռիւներում ցոյց տալով աչքի ընկնող քաջութիւն, հրամայելու, կարգադրելու հմտութիւն, նա կարճ ժամանակում միմեանց

ետևից պարգևատրուում է մի շարք շքանշաններով և, զեռ
ևս քսանևութ տարեկան, ստանում է գնդապետի աստի-
ճան, մի բան, որ գրեթէ չտեսնւած էր ռուս զօրքի մէջ:

Դեռ ևս շարունակուում էին այս կռիւները, որ 1853
թւին ռուս ու տաճիկ կառավարութեանց յարաբերու-
թիւնները լարուում են և այդ երկուսի մէջ սկսուում է
պատերազմը: Պատերազմական գործողութիւնները, սկսե-
լով Սև-ծովի կովկասեան ասիերում, շուտով փոխադրուում
է Ղարսի և Ալէքսանդրապոլի մօտ: Ահա այս պատերազմ
է ուղարկուում Լօրիս-Մելիքովը և, մտնելով գործող բանա-
կի մէջ, մի քանի կռիւներում ցոյց է տալիս աչքի ընկնող
քաջութիւն և արտակարգ հնարագիտութիւն: Բաշ-կաղիկ-
լեարի մօտ տեղի ունեցած յաղթական ճակատամարտում
իր հեծելազօրքի հետ արած մի քանի համարձակ յարձա-
կումների համար նա պարգևատրուում է ոսկէ թրով:

Այս ճակատամարտից յետոյ ռուսաց զօրքը պաշա-
րուում է Ղարսի բերդը և Լօրիսին յանձնուում է իր ձեռքով
կազմակերպած հայ և թուրք կամաւորների հրամանատա-
րութիւնը: Այդ պաշարման ընթացքում Լօրիս-Մելիքովը
մի քանի ընդհարումների մէջ բաշի-բուզուկներին մեծ
ջարդ է տալիս և դրա համար պարգևատրուում է Վլադի-
մերի 4-րդ աստիճանով՝ իր ժապաւէնով:

Այս կռիւց մի քանի ամիս անց սկսուում է Քիւրիւք-
Դարայի նշանաւոր ճակատամարտը, ուր տաճկաց վացուն-
հազարանոց բանակի ղէմ կուում էր ռուսաց քսանհինգ-
հազարանոց բանակը: Այս կռուում Լօրիսը գտնուում էր
իշխան Բեհբուլթովի ձախ թևում. և ահա այստեղ իր հե-
ծեալների հետ գործած մի շարք ուժեղ և անօրինակ
յարձակումներով վերցնելով մի քանի հարիւր գերիներ,
նա մեծապէս օգնում է ռուս զօրքի տարած յաղթութեա-
նը, որի համար և արժանանում է այս անգամ Վլադիմիրի
3-րդ աստիճան շքանշանին:

Օսմանեան բանակը կորցնելով այս ճակատը, փախ-
չում, ապաստանում է Ղարսի ամրութիւններում և պատ-
րաստուում բերդից պաշտպանելու:

Ռուս զօրքը շարունակում է պաշարել բերդը: Լօրիսի
հեծազնդին տալիս են բազմաթիւ պատասխանատու և
վտանգաւոր յանձնարարութիւններ՝ խլել և ոչնչացնել
թշնամու պաշարը, կտրել թիւրքաց այս կամ այն զօ-
րամասի առաջը, հալածել Սողանլուխից դուրս եկող
զօրքերին, որ սա չմիանայ բերդապահ զօրքի հետ: Այս
յանձնարարութիւնը կատարելով ամենայն հմտու-
թեամբ, նա անցնում է Ղարսից դուրս եկող զօրքի վրայ
և մերթ այս ամրութեան, մերթ միւսի վրայ գործած իր
յարձակումներով իրարանցում գցելով թիւրք զօրքի մէջ,
տարի ու կէս շարունակ մեծապէս նպաստում է օսման-
եան բանակի յուսահատ դրութիւնը: 1855 թւինոյեմբեր
16-ին Ղարս պաշտպանող զօրքը, այլևս չկարողանալով
դիմանալ իր դիրքերի վրայ, անձնատուր է լինում ռուս
զօրքի հրամանատար գեներալ Մուրաւեւին: Սրա բա-
նակը մտնում է Ղարս և, գերելով 15000-անոց տաճիկ
զօրքը, վերցնում է այնտեղ ամբարւած ահագին թւով
պատերազմական աւար և ուտեստներ:

Ղարսի առումից յետոյ Մուրաւեւովը Լօրիս-Մելիքովին
նշանակում է Ղարս քաղաքի և գրաւած շրջանի կառա-
վարիչ: Դեռ նոր էր սկսել Լօրիսը կարգ ու կանոն հաս-
տատել երկրում, երբ իմացուում է, որ, Ղրիմի պատերազ-
մում կրած անաջողութիւնների պատճառով ռուսաց
կառավարութիւնը, ստիպւած, հաշտութիւն է կայացնում,
համաձայն որի նա պարտաւորուում է թողնել Բայազէդը,
Արդահանն ու Ղարսը, վերադարձնելով իր գրաւած քաղաք-
ներն ու շրջանները տաճիկներին: Լօրիսը իր զօրքով թող-
նում է Ղարսը և գալիս Թիֆլիս, ուր նշանակուում է կով-
կասեան բանակի հեծազօրքի գնդապետ:

Դեռ մի տարին չանցած Կովկասի Փոխարքայ իշխ. Բարեատինսկին Լորիս-Մելիքովին կանչում է մինոր պատասխանատու պաշտօնի. նա նշանակում է անհանգիստ և միշտ ապստամբ Աբխազիայի ոռոսաց զորաբաժնի գլխավոր: Մօտ երկու տարի վարում է նա այդ շատ վտանգաւոր պաշտօնը, որի ժամանակ խաղաղեցնում է խոզվայոյց լեռնականերին, կառուցանում է Յեբելթայի բերդը, հաշտեցնում է ոռոսների հետ անհաշտ այս ժողովրդին և, նրան կարգի ու հպատակութեան բերելով, սկսում է լուրջ ուշք դարձնել երկրի ներքին բարեշինութեան գործի վրայ: Այս ծանր պաշտօնը լրջամտութեամբ տանելու համար նա ստանում է Ստանիսլաւի I-ին աստիճան շքանշանը:

Հէնց այս շինարար գործունէութեան ժամանակ նա ստանում է մի նոր յանձնարարութիւն՝ տեղաւորել այն հազարաւոր ոռոսահպատակ չեչեններին, որոնք, դժգոհ ոռոս իշխանութիւնից, ցանկութիւն էին յայտնել թողնել իրենց հայրենի երկիրն ու լեռները և գաղթել Տաճկաստան: Տեղաւորելով զրանց տաճկական այս և այն սանջակում, Լորիսը, թիւրքաց կառավարութեան հետ պայմաններ կապելու համար, գնում և Կ. Պօլիս և ամենայն հեռատեսութեամբ կատարելով այս գործը, վերադառնում է Թիֆլիս, ուր իմանում է, որ այս գործի համար ինքը պարգևատրւած է Աննայի I-ին աստիճանի (սրերով) շքանշանով:

Այս թւին Դադստանի հերոս Շամիրը արդէն գերլած էր, հպարտ ու ապստամբ Դադստանն ու Չեչնան յաղթւած: Այժմ հարկաւոր էր մի այնպիսի անձ, որը, ճանաչելով այդ երկրի ու ժողովրդի կարիքներն ու հոգեբանութիւնը, սովորութիւններն ու ոգին, կարողանար այդ վայրենի երկրում պետականոր կարգեր պատւաստել, ոռոսական օրէնքների հետ ծանօթացնել — միայն թէ առանց խստութիւն-

ների ու արիւնհեղութեան: Այդ նուրբ ու շատ պատասխանատու պաշտօնի համար հրաւիրւում է Լորիսը, որը, նշանակելով Հարաւային Դադստանի կառավարիչ և Դերբենդի քաղաքապետ, հէնց առաջին քայլից ամենայն զգուշութեամբ և մեծ քաղաքագիտութեամբ տանում է ամբողջ գործը, օր օրի վրայ գրաւելով դէպի ինք ժողովրդի սէրն ու անկեղծ համակրութիւնը: Անդադրում, երբեմն մէն մէնակ, շրջելով աուլից-աուլ, լեռից-լեռ, նա մօտ ծանօթութիւն է հաստատում տեղական ազգեցիկ մարդկանց հետ, ծանօթացնում է սրանց նոր կարգերի ոգու հետ և, առանց կպչելու ազգաբնակչութեան աւանդական սովորութիւններին, հէնց իրանցից հիմնում է տեղական-ժողովրդական դատարաններ, վարչական ատեաններ, տալով զրանց կառավարութիւնը տեղացիներին: Նրա այս խելացի, հեռատես և համբերատար քաղաքականութեան շնորհիւ ոռոսական նոր կարգերը, առանց դժւարութեան հանդիպելու, կամաց-կամաց ընդունւում են տեղացիների կողմից և դեռ ևս մի տարի առաջ խոտվահոյց երկիրը հաշտւում է ոռոս տիրապետութեան հետ:

Լորիսը, որ մինչև այդ գեներալ-մայորի աստիճան էր ստացել, իր վարչական այս գործունէութեան համար արժանանում է Բարձրագոյն շնորհակալութեան, իսկ սեպտ. 18-ին, երբ առաջին անգամ Կովկաս է գալիս Ալեքսանդր II-րդ կայսրը, պարգևատրւում է նրանից Վլադիմիրի II-րդ աստիճան շքանշանով:

Կարճ ժամանակից յետոյ Կովկասի փոխարքայ է նշանակւում Մեծ-իշխան Միխայիլ Նիկոլաևիչը՝ թագաւոր կայսեր եղբայրը: Այդ ժամանակ Թերէքի շրջանի ոռոս ազգաբնակչութեան և զազախների զրութեան կարգաւորումը, որպէս և այդ շրջանի լեռնականներին նոր օրէնքների հետ հաշտեցնելը, օրւայ հրատապ հարցերն էին կազմում: Միակ անձը, որին կարելի էր վստահել այս պատասխա-

նատու գործը, Փոխարքան գտաւ Լօրիս-Մելիքովին: Եւ ահա 1863 թւի մարտ 28-ին գեներալ-մայօր Լօրիս-Մելիքով Բարձրագոյն հրամանով նշանակուեալ է թերէքի շրջան կառավարիչ և հրամանատար բոլոր զօրքերի, իսկ ապրիլ 17-ին իր գերագանց եռանդոտ ծառայութեան համար ստանում է գեներալ-լէյտենանտի զինւորական բարձր աստիճան և այդ այն ժամանակ, երբ Լօրիսը ընդամենը 37 տարեկան էր, մի պատիւ, որին ուսս գեներալներէից չափազանց քչերն են արժանացել:

Լօրիս-Մելիքովի գործունէութիւնը թերէքի շրջանի կառավարչի և զօրքերի հրամանատարի պաշտօնում այնքան բազմակողմանի է, ստեղծագործական և արդիւնաւոր, որ եթէ մենք կանգ առնենք դրանց վրայ աւելի մանրամասն, ստիպւած պէտք է լինենք մի մեծ հատոր գրել. և որովհետև մեզ հետաքրքրում է նրա գործունէութիւնը 1877—1878 թւականներում՝ ուսս—տաճկական պատերազմի ժամանակ, ուստի մենք մի համառօտ ակնարկ կզգենք թերէքի շրջանի կառավարչութեան ժամանակ նրա արած վերանորոգչական ու ստեղծագործական ամենակարևոր գործերի վրայ, որոնց մէջ նա փայլում է իր վարչական տաղանդով:

Լօրիսին ամենից առաջ աջողւում է վերացնել իր շրջանի ազգաբնակչութեան մէջ ճորտատիրութիւնը. և այդ իրագործում է նա առանց դժգոհութիւն առաջացնելու ճորտատէրերի կողմից. ապա ամբողջ շրջանում մտցնում է Ալեքսանդր Ա-րդ կայսեր դատաստանական նոր կարգերը: Այդ բանի համար շնորհակալ ուսս ազգաբնակչութիւնը, որպէս արտակարգ պատիւ, նրան տալիս է «թերէքի շրջանի ուսս կօզակի» պատւաւոր կոչում. միաժամանակ նրան աջողւում է լեռնական, միշտ զինւած ազգաբնակչութեան մէջ ներշնչել կատարեալ հաւատ զէպի ուսս արդարագատութիւնը, որի պատճառով լեռնականները իրանց

կամքով և յօժարութեամբ վայր են գնում զէնքերը և կպչում հալալ աշխատանքի, մոռանալով թալանն ու ասպատակութիւնները, որոնց մէջ նրանք դաստիարակել էին դարեր շարունակ:

Ահագին նշանակութիւն տալով կրթութեան յեղափոխիչ գերին, Լօրիսի առաջին հոգսերէից մէկն է լինում՝ բացել շրջանում մեծ թւով ժողովրդական դպրոցներ, որոնց թիւը նրա օրով 34-ից հասնում է 400-ի, իսկ միջնակարգ ու արհեստագիտական դպրոցներ բացել է տալիս թէ քաղաքներում և թէ խոշոր ստանցիաններում: Ժողովրդական դպրոցների համար պատրաստւած ուսուցիչ-ուսուցչուհիներ ունենալու համար, հիմնում է մի շարք մանկավարժական դասընթացքներ. և ահա շնորհիւ դրա թերէքի շրջանում ընդհանուր գրագիտութիւնը նրա պաշտօնավարութեան 12 տարիների ընթացքում 30%-ից բարձրանում է նոր սերնդի մէջ 380%-ի: Հետաքրքիրն այն է, որ ինքը ազգաբնակչութիւնը ամենայն սիրով իր սեփական միջոցներից մեծ գումարներ է յատկացնում ժողովրդական դպրոցներ բացելուն՝ առանց պետական գանձարանից նրա պատաներ խնդրելու: Գալով արդիւնաբերական կեանքին զարկ տալու նպատակով արւած ձեռնարկութիւններին, նշանաւոր է Լօրիսի ջանքերով մի շարք նոր ջրանցքների կառուցումը և ապա 120-ից աւելի հացի շտեմարանների հիմնումը. գրանց մէջ միլիոնաւոր փութ հացահատիկ էր ամբարւում՝ երաշտ տարիներում ազգաբնակչութիւնը մատակարարելու նպատակով:

Լօրիսի ջանքերին են պատկանում տասնակ գործարանների կառուցումը, մօտ 824 վերստ նոր խճուղիների ցանցը, լեռնային ճանապարհների գրեթէ ամենուրէք կարկաւորումը, որոնց շնորհիւ նորանոր շուկաներ են բացւում ազգաբնակչութեան համար երկրի նոյն իսկ յետ ընկած անկիւններում:

Բացի դա Լօրիսը մեծապէս նպաստում է շրջանում բազմաթիւ հիւանդանոցների և բուժարանների բացման գործին, ուժեղացնում է բժշկական օգնութեան գործը, հիմնում է վիճակագրական կոմիտեաներ, իսկ հասարակական գումարները, հաշւի ու կարգի տակ դրւելով, հնար է տալիս ազգաբնակիւթիւնը դրանց գործադրել ժողովրդական կուլտուրական պէտքերի վրայ:

Եւ այսպէս իր կառավարութեան տասներկու տարիների ընթացքում Լօրիս-Մելիքով ցոյց է տալիս վարչական խոշոր ընդունակութիւններ. օժտւած սրտացաւ, լայն և մարդասէր աշխարհայեացքներով, զինւած ազմինիստ-բատորի հազւագիւտ տաղանդով, շուտով նա ստանում է Ռուսաստանի լաւագոյն պետական մարդի համբաւ, որը յետագայում նրան տարաւ հասցրեց ներքին գործերի մինիստրի պատասխանատու պաշտօնին մի այնպիսի ժամանակ, երբ պետական նաւը ուժեղ կերպով դողդողում էր արդէն բարձրացող փոթորիկի առաջ...

Եւ անա Լօրիսի այս բացառիկ յատկութիւնները գրտնում են Ալեքսանդր II-րդ կայսեր կողմից մեծ գնահատութիւն. 1867 թւին Լօրիս-Մելիքով ստանում է Նորին Մեծութեան Գեներալ-Ազիւտանտի պատւաւոր տիտղոսը և միաժամանակ պարգևատրւում է Ալեքսանդր Նեակու շքանշանով, իսկ երբ, քիչ յետոյ հիւանդութեան պատճառով ստիպւած է լինում թողնել իր պաշտոնը, ստանում է կաւալերիայի գեներալի աստիճան:

Ազգաբնակիւթիւնը սրտառուչ ողջ-երթ է պատրաստում իր սիրած կառավարչին, որին աջողւել էր իր ետեւից թողնել խաղաղացած, ստեղծագործական աշխատանքի ընդունակ և առաջադիմութեան ճամփի վրայ գտնւող միլիոնաւոր բնակչութիւն:



Թիւրքաց դէմ գործող ոռուսաց
Կովկասեան Զօրաբանակի գլխաւոր
հրամանատար

ՄԵՄ-ԻՇԻԱՆ ՄԻԻԱՅԻԼ ՆԻԿՈԼԱԵԻԻՉ:

3. Պատերազմի սկիզբը եւ գեներալ Լօրիս-Մելիքեանի առաջին փայտերը

Զինուորական այսպիսի փառաւոր անցեալ և վարչական աչքի ընկնող փորձառութիւն ունեցող անձին էր վստահանում Ալեքսանդր 11-րդ կայսրը և Փոխարքան Թիւրքաց դէմ գործող բանակի բաղադր և սրա դրօշի պատիւը:

Նշանակելով օսմանցոց դէմ Փոքր-Ասիայում գործող ռուսաց զօրքի հրամանատար, Լօրիսը անմիջապէս իր ամբողջ շտաբով փոխադրւեց սահմանին մօտ՝ Ալեքսանդրապօլի բերդ և այստեղ սպասեց պատերազմի յայտարարութեանը:


Ապրիլի 11-ին Լօրիս-Մելիքեան ստանում է Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլաևիչից հետևեալ հեռագիրը.

«Վաղը, ամսիս 12-ին Թիւրքիային պատերազմ է յայտարարւելու: Բարձրագոյն հրամանով առաջարկում եմ Ձեզ, Ձեզ յանձնւած կորպուսի զօրքերով սկսել Թիւրքաց կայսերութեան սահմաններում յարձակողական գործողութիւններ»:

Հեռագիրը ստանալուն պէս Լօրիսը կազմում է կորպուսի առաջխաղացման մանրամասն դիսպօզիցիան (ծրագիրը) և նոյն օրը ժամ 11-ին հրամայում է իր գլխաւոր զօրամասի առաջապահ հեծելազօրքին անմիջապէս անցնել Արփաշայ (Ախուրեանը) և, մտնելով տաճկական սահման, յարձակւել սահմանապահ զօրքի պահակներին վրայ, աշխատելով գերի վերցնել պահակներին:

Լօրիսի կորպուսը, որ սկսելու էր պատերազմական գործողութիւնները, այդ պահին ունէր հետևեալ կազմը. նա բաժանւած էր երեք զօրամասի՝ 1) Աջ զօրամաս, որ կոչւում էր Ախալցխայի օտրեադ. սա բաղկացած էր 9196 սևիներից (հետևակ զօրք), 3126 սրերից (հեծելազօրք) և

207-2
(10805-57)
21736-60



36 թնդանօթներից: Սա յանձնւած էր գեներալ-լէյտենանտ Դէվէլին, 2) Գլխաւոր ոյժեր (կենտրօն), որի անմիջական հրամանատարն էր ինքը՝ Լօրիս-Մելիքեանը: Սրա մէջ կային 17,788 սևիներ (հետևակ), 6,424 սրեր (հեծելագօրք), 92 թնդանօթ:

3) Երևանի օտրեադ (ձախ թևը)՝ 6,602 սևիներով (հետևակ), 4014 սրերով (հեծելագօրք), 32 թնդանօթներով. սրա հրամանատարն էր գեներալ-լէյտենանտ Արշակ Տէր-Ղուկասեանը:

Եւ այսպէս գործող կորպուսի բոլոր ոյժերը միասին կազմում էին՝ 33,586 սևիներ (հետևակ), 13,596 սրեր (հեծելագօրք) և 160 թնդանօթներ. բոլորը միասին մօտ 50,000 հոգի:

Ժամանակակից պատերազմների դիմաց, ուր պատերազմի բեմ է հանուում միլիոնաւոր կուռղներից բազկացած բանակ, պարզ է, որ այս ուժերը չնչին են, սակայն, ինչպէս մենք կտեսնենք յետագայում, այսքան ոյժերով իսկ ուռուաց գօրքին աշողւեց պատմութեան մէջ անօրինակ գործողութիւններ կատարել գրեթէ մէկուկէս անգամ ուժեղ հակառակորդի դէմ:

Լօրիսի հեծելագօրքը գեներալ-մայօր իշխան Չաւչաւաձէի հրամանատարութեամբ նոյն գիշեր (ապրիլի 11-ին) անցնում է Արփաչայր, մտնում թշնամու հող և վերցնում սահմանապահ պահակներին, գերելով 6 օֆիցերներ և 96 զինւոր:

Պահակները ոչ մի տեղ ընդդիմադրութիւն չեն ցոյց տալիս, չսպասելով ուռուաց կողմից յարձակման: Հէնց նոյն օրը օսմանեան սահմանագլխում ապրող և աւագակութեամբ պարապուղ դարափափախներից երկու հարիւր հոգի ձիաւոր և սպառազինւած ներկայանում են իշխ. Չաւչաւաձէին և, անձնատուր լինելով՝ խնդրում են թոյլ տալ իրանց ևս մտնելու ուռու գօրքի շարքերը:

Մինչ առաջապահ գօրքերը սահմանն անցած հետախուզութիւններով էր զբաղւած, ապրիլ 12-ին գլխաւոր ոյժերը բոլոր գօրամասերով շարժոււմ են դէպի սահման և, հասնելով Բաշ-Շորագեալ, Արգինա, Փիրվալի և Ղըզըլչախչախ գիւղերին, գիշերում են դրանց շրջակայքում: Նոյն օրը Բայեանդուրի դաշտ է գալիս ինքը կորպուսի հրամանատար գեներալ-ազիւտանտ Լօրիս-Մելիքեան իր շտաբով և, բոլոր գօրքերի ներկայութեամբ կարգում է գօրքին ուղղւած հետևեալ նշանաւոր կոչը.

«Թագաւոր կայսեր կամքով և կովկասեան գօրքի Գլխաւոր Հրամանատարի կարգադրութեամբ ինձ յանձնւած կորպուսի գօրքերը մտնում են Ասիական Թիւրքիայի սահմանները:

«Գործող կորպուսի գօրքեր! Թագաւորի կամքը, Ռուսաստանի արժանապատուութիւնը պահանջում են, որ տիրելով տաճկական նահանգները դրանց մէջ ապրող ազգաբնակիչութեան մէջ հաստատուի խաղաղութիւն: Ձեզնից ոչ ոք, ոչ մի պատրւակով չպէտք է զէնք բարձրացնի մեր իշխանութեանը հպատակութիւն յայտնած բնակիչների վրայ՝ ինչ կրօնի և ինչ ազգութեան և նրանք պատկանեն: Ոչ մէկը ձեզնից, ոչ մի զէպքում չպէտք է առանց վճարի օգուտի բնակիչների ունեցւածքով ինչ և լինի այդ ունեցւածքը: Իմացէք, որ մեզ թշնամի կհամարւի թուրք գօրքը և ամեն մէկը, ով զէնք կը բարձրացնի պաշտպանելու թիւրքաց կառավարութիւնը»:

Այս կոչը կարգալուց յետոյ Լօրիսը դիմում է գօրքին մի կարճ, բայց շատ զգացւած ճառով:

Կորպուսի հրամանատարի այս ճառը անագին ոգևորութիւն է առաջ բերում գօրքի մէջ և ծածկուում է երկարատև «ուռու»-ներով: Ամենալաւ, գրեթէ տօնական տրամադրութեան տակ, ոգևորւած, առողջ և ապագայի վրայ վստահ, գօրքը սկսում է իր ծանր ու մեծ գործը:

Յաջորդ երկու օրում՝ ապրիլ 13-ին և 14-ին Լօրիսի գլխաւոր ոյժերը մեծ կարգով արշաւում են դէպի Ղարս՝ ճանապարհին թշնամու կողմից ոչ մի տեղ ընդդիմադրութիւն չհանդիպելով: Զօրքը, վերջապէս, անցնելով Ղարսաշայր, ապրիլ 15-ին, բանակատեղի ընտրելու նպատակով կանգ է առնում Գիւրուք-Դարայի և Փալղուան գիւղերի միջև գտնուող բարձրադիր տափարակի վրայ, ուր դեռ ևս 1854 թւին ռուս բանակը նոյն թշնամուց տարել էր փառաւոր յաղթութիւն:

Յիշատակելու է, որ ռուս զօրքին, սրա առաջխաղութեան ամբողջ ընթացքում, խաչով ու խաչվառով ընդառաջում են սահմանակից հայ և յոյն գիւղերի ազգաբնակիւթիւնը իրենց հոգևորականութեան հետ, որոնք անկեղծ ոգևորութեամբ ընդունելով ռուս զօրքին, պաղատում են նրան լինել իրենց հովանաւորն ու պաշտպանը: Լօրիսը, որ լաւ ծանօթ էր ոչ միայն այս գիւղերին, այլ և սրանց մէջ դեռ 1855 թւականներից բազմաթիւ ծանօթներ ունէր, հանգստացնում է ազգաբնակիւթեանը և նրանց յանձնում է իր զօրքի խնամքին:

Ազգաբնակիւթեան այս տրամադրութիւնը ահագին դեր խաղաց ամբողջ պատերազմի ընթացքում. ռուս զօրքը, մանաւանդ պատերազմի առաջին շրջանում, ուտելիքէնի պաշարի և փոխադրութեան միջոցների մէջ պակասութիւն չգգաց. ամեն ինչ, որ հարկաւոր էր զօրքին—սա ստանում էր այս շրջանի գիւղերից և գնածի համար ազգաբնակիւթեանը վճարում էր ամենայն ճշտութեամբ՝ նախապէս սահմանած սակագնով:

4. Թիւրքաց բանակը Ղարսում

Ոչ ռուսաց բանակի առաջխաղացումը և ոչ էլ նրա նպատակը՝ նւաճել Ղարսի սանջակը և ապա յաղթական

շարժումով Սողանլուղի բարձունքներից անցնել էրզրում—գաղտնի չէին տաճիկ զօրքի գլխաւոր հրամանատար Մուխթար-փաշայի համար:

Իր լրտեսների միջոցով մանրամասն տեղեկութիւններ առնելով ռուսաց զօրքի կազմի և ապա նաև ամսիս 12-ին սահմանն անցնելու մասին, Մուխթարը, որ այդ ժամանակ գտնուում էր Ղարսում, հրամայում է սահմանապահ պահակներին և Ղարսից դուրս գտնւած միւս զօրամասերին խոյս տալ ռուս զօրքի հետ ընդհարումներից և ժողովել Ղարսի բերդում:

Մուխթար փաշայի այս խուսափողական տակտիկան հետևանք էր այն բանի, որ նրան հաւատացրել էին, որ Լօրիսի բանակը կազմւած է 70,000 զօրքից, իսկ ինքը իր տրամադրութեան տակ ունէր միմիայն 40—41 հազար հոգի, որից 23 հազարը ամբացրած էր Ղարսում և նրա շրջակայքում, իսկ մօտ 17 հազարնոց զօրամասը գտնուում էր Սողանլուղի և էրզրումի միջև գտնւած ամրութիւնների վրայ՝ նպատակ ունենալով պահպանելու այդ ճանապարհը ռուս զօրքի խուժումից: Պարզ է, որ այսքան զօրքով թիւրքաց զօրքի հրամանատարը անհնար էր համարում յարձակողական գործողութիւններ սկսել, որին Մուխթարը մտադիր էր զիմել առաջիկայում, երբ նա Անատոլիայից կստանար հարկաւոր թւով օգնական զօրքեր: Այնինչ ներկայումս, կենտրոնացնելով իր զօրքի գլխաւոր ոյժերը Ղարսի նման առաջնակարգ և անառիկ ամրութեան մէջ և, ունենալով իր տրամադրութեան տակ մեծ պաշար, զօրքը կարող էր մինչև օգնական ոյժերի գալը ոչ միայն պաշտպանւել ռուսաց յարձակումից այլ և երբեմնակի փոքր ու մեծ յարձակումներ գործել ռուս առաջապահ զօրքի վրայ: Ճիշտ է, ռուս զօրքի առաջխաղացումը մեծ իրարանցում գցեց Ղարսում, մանաւանդ քաղաքացի խաղաղ բնակիւթեան մէջ, որը, յիշելով 1854—55 թւական-

ներում իր կրածները, պահանջում էր Մուխթարից թողնել բերդը և, դաշտ գուրս գալով, կուրի մտնել ոռոսաց ոյժերի հետ, սակայն Մուխթարը խիստ միջոցներով այդ զժգոնութեան առաջն առնում է և խոստանում ապահովել ազգաբնակիցներին ամեն տեսակ վտանգներից. միևնոյն ժամանակ նա արգելք չի լինում ցանկացողներին թողնել Ղարսը մտնելու երկրի ներսը՝ Արզրում, Օլթի և այլն:

Այսպէս քաղաքացիներին հանգստացնելուց յետոյ, Մուխթար փաշան երկիւղ էր կրում միայն մի բանից՝ այն է, որ Լորիսը կարող էր զօրքերի մի մասով պաշարել Ղարսը, իսկ միւս մասը ուղարկել Սողանլուխի վրայով Արզրում՝ Անատոլիայի մայրաքաղաքի վրայ, որը տաճկական զօրքի համար ռազմամթերքի և ուտեստի պաշարի կատարեալ շտեմարան էր: Եւ ահա որպէսզի այս բանը տեղի չունենար, նա ապրիլ 13-ին, վերցնելով իր հետ 5,000 զօրք և վեց թնգանօթներ, թողնում է Ղարսը և հեռանում դէպի Սողանլուխ՝ պաշտպանելու Արզրումի ճանապարհը: Ահա այստեղ նա յոյս ունէր միացնել իր հետ նոր սպասուող զնդեր և դրանցով գալ նորից Ղարս՝ յարձակելու Լորիս Մելիքեանի զօրքերի վրայ: Մուխթար փաշայի հեռանալուց յետոյ Ղարսում մնում է մօտ 18 հազար զօրք և երկու հազար հոգի էլ քաղաքացիներից կազմւած կամաւորներ: Թուրքաց զօրքի գլխաւոր հրամանատարը Ղարսից հեռանալիս չի մոռանում մի բատալեօն օգնական զօրք ուղարկել Արզահան, որը, ինչպէս իրաւամբ սպասում էր Մուխթարը, նոյնպէս պաշարւելու էր ոռոսաց զօրքի կողմից:

5. Ռուսաց բանակը Ղարսի դիմաց եւ Կաղզւանի առումը

Քիւրբիւք-Դարայում ոռուս զօրքը սակայն մնում է միայն մի օր: Ապրիլ 16-ին գեներալ-ադիւտանտ Լորիս-Մելիքեանը հրամայում է զօրքի գլխաւոր ոյժերին առաջ

գնալ դէպի Ղարս և կանգ առնել նրանից 15 վերստի վրա՝ Ենի-Քէյի և Չաիմի մօտ: Այստեղ զօրքն ունենալով ամուր յենման կէտ, միաժամանակ պաշտպանած կլինէր որպէս Ղարսից-Արզահան, նոյնպէս և Ղարսից Ալէքսանդրապօլ տանող ճանապարհը, որով ապահովւում էր ոռուս զօրքի թիկունքը թշնամու անսպասելի յարձակումներից:

Առաջ քաշելով գլխաւոր ոյժերը դէպի Չիմին և Քիւրուք-Դարայ, հրամանատարը պատւիրում է ամրացնել Քիւրբիւք-Դարան և այդտեղ էլ կենտրոնացնում է Ալէքսանդրապօլից բերւող զօրքի թէ պաշարեղէնը և թէ ռազմամթերքն ու հիւանդանոցները մի ուժեղ պահակով, ապահովելով Ալէքսանդրապօլ-Քիւրբիւք-Դարայի ճանապարհը:

Նոյն օրը ոռուսաց գլխաւոր զօրքերը բանակ են գնում հեծելագօրքը Ղարսի-չայի ափին՝ Ենի-Քէյ գիւղի մօտ, հետեակ զօրքը՝ Չաիմ գիւղի մօտ, իսկ առաջապահ զօրքերը՝ թշնամու ամեն մի շարժումը դիտելու համար, տարւում են առաջ՝ Ղարսից ընդամենը 9 վերստ հեռու Մագրա գիւղի մօտ գտնւած մի բարձրադիր տեղ: Ղարսի հզօր ամրութիւնները այստեղից երևում էին շատ պարզ: Նշանակալից է, որ այստեղից Ղարսում ոչ մի շարժման յետք անգամ չէր երևում. արտաքուստ ամեն ինչ թւում էր հանգիստ և անխռով:

Ինչպէս տեսանք, Լորիսը գործող կորպուսը բաժանել էր երեք զօրամասերի, որոնցից ամեն մէկը, պատերազմը յայտարարելուն պէս, պէտք է զանազան կողմերից մտնէր տաճկական սահման և զբաւէր որոշ տեղեր: Եւ այսպէս աջ զօրամասը գեներալ-լէյտենանտ Դէվէլի հրամանատարութեամբ գտնւում էր Ախլցխայում և նշանակւած էր Արզահանի վրայ արշաւելու. կենտրոնը, ուր գլխաւոր զօրքն էր և Լորիս-Մելիքեանի շտաբը, պէտք է անցնէր դէպի Ղարս, իսկ ձախ թւը՝ Երեանեան զօրամասն էր կազմում գեներալ-լէյտենանտ Ա. Տէր-Ղուկասեանի հրամանա-

տարութեամբ. սա Իգդիբի վրայով գնալու էր Բայագէտը գրաւելու և այդ սահմանը պաշտպանելու. — ապա, նայած հանգամանքներին, այս երեք զորամասերի ոյժերը միանալով կազմելու էին մի մեծ զորաբանակ՝ միասին արշաւելու Արզրու մի վրայ՝ սրան վերցնելու նպատակով:

Պարզ է, որ երեք զորամասերի որոշ ծրագրով գործելու համար անհրաժեշտ էր, որ նրանք մշտական և կանոնաւոր յարաբերութեանց մէջ լինէին իրարու հետ և գլխաւորապէս կորպուսի հրամանատար՝ Լօրիս-Մելիքեանի և սրա շտաբի հետ:

Այլ զորամասը, քանի դեռ չէր մօտեցել Արդահանին, կարող էր հեշտութեամբ յարաբերութիւններ պահպանել. ուրիշ բան էր գեներալ Տէր-Ղուկասեանի Երեւանեան օտրեազը, որը, ապրիլ 12-ին Իգդիբից դուրս գալով և անցնելով Արարատի (Ադրիդադի) լեռնաշղթան, ապրիլ 17-ին մտել էր տաճկական սահմանը: Այս զորամասի հետ արագ և անընդհատ յարաբերութիւն պահպանելու համար անհրաժեշտ էր ընտրել Լօրիսի և Տէր-Ղուկասեանի բանակների միջև ընկած ամենակարճ ճանապարհը. իսկ դա ընկնում էր Կաղզւանի վրայով. բացի դա Կաղզւանի մօտ և նրանից հարաւ-արևելք՝ Արաքսի ափում վիտում էին աւազակային խմբեր. սրանք, օգտուելով Մուխթար փաշայի հովանաւորութեամբ, անհանգստացնում էին ռուսական սահմանի մօտ գտնւած գաւառները: Դրանց վրայ հսկողութիւն ունենալը անհրաժեշտ էր դարձել գործող բանակի համար:

Այս հանգամանքներն էին, որ զրդեցին գեներալ-ադրևտանտ Լօրիս-Մելիքեանին որքան կարելի է շուտ ձեռնարկել Կաղզւանի գրաւմանը:

Այդ նպատակի համար նա հանում է երկու զորասիւն. մէկը՝ կազմւած գեներալ Տէր-Ղուկասեանի զորամասի ոյժերից կոմս Գրաբբէի ղեկավարութեամբ, միւսը՝ կազ-

մակերպում է Ղարսի մօտ բանակած գլխաւոր զորամասից, իր ազգական գեներալ-մայօր Լօրիս-Մելիքովի գլխաւորութեամբ, և պատւիրում է զրանց գնալ Կաղզւանի վրայ:

Երկու զորասիւները, դուրս գալով հակառակ կողմերից, միևնոյն օրը միանալու էին Կաղզւանի մօտ և, գրոհ տալով, առնելու էին քաղաքը: Այս արշաւանքը կատարւում է երկու զորասիւների կողմից էլ մատեմատիքական ճշտութեամբ. ապրիլ 23-ին դուրս գալով հակառակ կողմերից, ապրիլի 24-ին երկու գեներալներն էլ իրանց զօրքերով հանդիպում են Կաղզւանի տակ: Ռուս զօրքի գալը ահագին շփոթ ու իրարանցումն է առաջ բերում քաղաքում. Ղայմաղամը և Կաղզւանում գտնւած թիւրք զօրքը նոյն գիշեր հապճէպ թողնում են քաղաքը և փախչում: Անպաշտպան ժողովուրդը մեծ հանդիսաւորութեամբ ընդառաջում է ռուս զօրքին. սա, մտնելով քաղաք, առանց արիւն թափելու վերցնում է նրան: Գեներալ մայօր Լօրիս-Մելիքովը իսկոյն իր ձեռքն է առնում քաղաքի վարչութեան և ապահովութեան կազմակերպութեան գործը, որը և կարգի դնելով, զօրքի հետ վերադառնում է Լօրիսի մօտ:

Կաղզւանի գրաւումով ռուսաց ձեռքն է անցնում ոչ միայն Ղարսի սանջակի մեծ մասը, այլ և, որ կարևորն է, նաև Սօղանլուղից Արզրում տանող գլխաւոր ճանապարհների հսկողութիւնը:

6. Արդահանի պաշարումը եւ առումը

Ամբողջ Փոքր Ասիայում Ղարսից յետոյ Արդահանը համարւում էր առաջնակարգ բերդ: Նրա ամրութիւնները վրայ թիւրքաց պատերազմական մինիստրութիւնը գործ էր դրել ահագին հմտութիւն և գումար: Բերդի ամրութիւններից մի քանիսը շինւած էին անգլիացի

ինժեներներին հսկողութեան տակ՝ պատերազմական տես-
 նիկայի վերջին կատարելագործութիւններով: Արդահանը
 համարուում էր ոչ միայն որպէս պաշտպանողական կէտ
 թշնամուն դէմ տալու համար, այլ նաև որպէս յարձա-
 կողական ուժեղ յենարան թիւրքաց կողմից՝ եթէ սա ու-
 զենար յարձակել Ախալցխայի վրայ՝ նւաճելու Արևմը-
 տեան Անդրկովկասը և այստեղից Թիֆլիսի վրայ արշաւելու:

Այս աչքի առաջ ունենալով ոռուսաց զօրքի որոշ մաս
 պահուում էր Ախալցխայում. այս զօրասիւնը 1876 թւին
 աւելի ուժեղացւեց և հասցնելով ընդհանուր թիւը մօտ
 13,000 կուռդներին 36 թնդանօթներով, դարձաւ գործող
 կորպուսի աջ զօրամասը՝ հրամանատարութեամբ գենե-
 րալ-լէյտենանտ Դէվէլի:

Տաճկաստանի դէմ պատերազմական գործողութիւն-
 ները սկսելուց, այդ զօրամասը ևս հրաման ստացաւ ապ-
 րիլ 12-ին անցնել տաճկական սահմանը գնալու Արդահա-
 նի վրայ, ուր Հուսէյն և Սաբրի փաշաների հրամանատա-
 րութեան տակ կենտրոնացած էր մօտ 9000 զօրք 95
 թնդանօթներով:

Ախալցխայի զօրամասը Արդահանի վրայ արշաւելու
 համար դեռ ևս մարտին առաջացաւ դէպի Ախալքալաք,
 ուր և սպասեց Լօրիս-Մելիքեանի հրամանին՝ տաճկաց
 սահմանը անցնելու: Ապրիլ 11-ին, ստանալով պատերազ-
 մական գործողութիւնները սկսելու և սահմանն անցնելու
 հրամանը, գեներալ Դէվէլ շարժուում է Ախալքալաքից և,
 ամսի 15-ին անցնելով տաճկական սահմանը Չուրզունի
 ու Բէհրախաթունի վրայով, մեծ դժւարութեամբ, նորա-
 հալ ձևան ու դրանից առաջացած տիղմի միջով ճանա-
 պարհ բացելով, հազիւ ապրիլ 29-ին հասնում է Արդա-
 հանին և բանակ դնում Չագեստանում՝ բերդից 6—7
 վերստ հեռաւորութեան վրայ:

Լօրիս-Մելիքեանը, համարելով Դէվէլի բանակը Արդա-

հանը պաշարելու և վերցնելու համար փոքրաթիւ, որո-
 շում է Ղարսի մօտ բանակած իր ոյժերից նրան մի զօ-
 րեղ զօրամասով օգնութեան հասնել: Այդ նպատակով
 նա ապրիլ 28-ին գեներալ-լէյտենանտ Հէյմանին մօտ
 6000 զօրքով և 28 թնդանօթներով Չելաուսի վրայով ու-
 ղարկում է դէպի Արդահան: Չօրամասը, անցնելով Օմար-
 Աղան և Խան-Քէվը, մայիս 2-ին հասնում է Արդահանի
 մօտ և բանակում Ալագեազ լեռան լանջերում՝ Գիւրջի-
 բէկ գիւղի մօտ, թողնելով Ղարսի դիմաց գլխաւոր զօր-
 քերը գեներալ Կամարովի հրամանատարութեանը: Բա-
 նակ է գալիս և ինքը՝ գեներալ ադիւտանտ Լօրիս-Մելի-
 քեանը, նպատակ ունենալով անձամբ ղեկավարել Արդա-
 հանի դէմ բոլոր գործողութիւնները:

Մայիս 1-ին Լօրիս-Մելիքեան Ալագեազի բարձունք-
 ներից մանրամասն դիտում է իր դիմաց կանգնած Ար-
 դահանի բերդի ամրութիւնները: Նոյն օրը զինւորական
 խորհրդում, որին մասնակցում էին գեներալներ՝ Դէվէլ,
 Հէյման, Դուխովսկոյ, Բուլմէրինգ և Կախանով, որոշում
 է՝ նախ վերցնել Արդահանի վրայ արևելքից իշխող Գիւ-
 լավերդիի ամրացրած բարձունքները և ապա հետզհետէ
 հարաւից, յարձակելով բերդի կենտրոնական ամրութիւն-
 ների վրայ, առնել այն և դրանից յետոյ ձեռք զցել
 ամբողջ բերդը: Տալով անհրաժեշտ կարգադրութիւններ՝
 զօրքի մայիս 4-ին սկսելիք գործողութիւնների վերաբե-
 բեալ, Լօրիս հրամայում է մայիս 2-ին և 3-ին սկսել ու-
 ժեղ թնդանօթային ուժակոծութիւն, իսկ մայիս 3-ին գի-
 շերը զօրքի մասերը բռնելու էին իրենց տեղերը՝ առաջի-
 կայ ճակատի համար:

Ինչպէս ասացինք, Արդահանի վրայ յարձակումը Լօ-
 րիսը նշանակել էր մայիս 4-ին: Հրամայւած էր զօրքին՝
 հէնց որ հրամանատարի վրանի մօտից բաց կթողնւի հըր-

թիւը (Փշանք), բոլոր զօրամասերը միաժամանակ պիտի սկսէին իրենց գործողութիւնները:

Բացւում է մայիս 4-ի առաւօտը: Օրը խոստանում էր լաւ եղանակ: Արդէն ժամ 5-ից Լօրիս-Մելիքեանը նժոյգի վրայնստած անցնում էր զօրքի մի մասից միւսը՝ տալու այսօրւան կռիւ վերջին հրամանները: Մակայն, նախ քան գործի դիմելը, Լօրիս-Մելիքեան արիւնահեղութեան առաջն աննելու նպատակով, գրաւոր առաջարկ է անում Սաբրի փաշային, որ սա իր զօրքով անձնատուր լինի: Անցնում է 2—3 ժամ. և ահա, որպէս պատասխան այս առաջարկի, էմիր-Օղլիի ամրութեան բարձունքից թիւրքերը բացում են թնդանօթային առաջին հարձակը. սրան յաջորդում է երկրորդը, երրորդը... և թանձր մուխը պատում է էմիր-Օղլիի բարձունքները: Լօրիս-Մելիքեան հրամայում է բաց թողնել պայմանաւորւած հրթիռը: Բարձրանում է սա վեր ու վեր, տրաքում կարմիր կրակներով և... նոյն վայրկեանին Ալագեազի և Գիլաւերդի լանջերից խօսում են ռուսաց թնդանօթները... Երկու կողմերի միջև սկսում է թնդանօթային կատաղի կռիւը, լցնելով տաս վերստ տարածութեան վրայ վառօդի թանձր ամպեր: Գեներալ Դէվէլը արևելքից, գեներալ Հէյման հարաւից առաջ են քաշում իրենց հետևակ և ձիաւոր մասերը՝ երկուսն էլ մի և նոյն կէտ նպատակի՝ էմիր-Օղլիի ամրութեան վրայ, որը անդադար, բայց առանց զգալի վնաս հասցնելու, կրակ էր թափում ռուս թնդանօթային պատնէշների շորս կողմը: Էմիր-Օղլիին օգնում են քաղաքին մօտ գտնւած միւս հինգ ամրութիւնները. լուռ էր միայն ամենից վտանգաւոր և սպառնալից հիւսիսային Բամազան ամրութիւնը: Ռուսաց աջ թևը, գեներալ Դէվէլի առաջնորդութեամբ, շարունակում է կրակը և, փոքր ժամանակից յետոյ, լռեցնելով էմիր-Օղլին պաշտպանողներին, բերդի ստորին դիրքերից ժամ 12-ի մօտ ստիպում է սրանց յետ նահանջել իրենց

երկրորդ դիրքերը: Սրանց նահանջելովը առաջ են անցնում ռուս թնդանօթները: Կռիւը, գնալով, տաքանում է: Այդ ժամանակ Գանձակի հետևակ գնդի գնդապետ իշխան Ամիրաշիբին իր քաշարի զօրքով գրոհ է տալիս թիւրքաց երկրորդ դիրքերի վրայ. այս համադարկների կրակի տակ քշելով թիւրք զօրքին դէպի վեր, զօրքի առաջաւոր մասի հետ նա մագլցում է դէպի էմիր-Օղլիի պատնէշները: Տեսնելով, որ իր գունդը չափից գուրս յոգնել է վեց ժամ տևող անդադար կռուում, Ամիրաշիբին օգնական զօրք է խնդրում հրամանատարից: Լօրիս-Մելիքեան Ալագեազի լանջերից, տեսնելով աջ թևի աջողութիւնը և Ամիրաշիբիի զօրքերի առաջընթացութիւնը, գեներալ Հէյմանի զօրամասից մի գունդ օգնութեան է ուղարկում գնդապետ Ամիրաշիբիին, պատուիրելով այս զօրամասին գրոհ տալ էմիր-Օղլիի վրայ հարաւային կողմից: Սրանով թիւրքաց ոյժերը ստիպւած են լինում կռուել արդէն երկու ճակատով՝ դէպի հարաւ և արևելք: Ժամ 3-ին գնդապետ Ամիրաշիբին, իր զօրքին մի քանի բոպէ հանգիստ տալուց յետոյ, վերսկսում է յարձակումը նոր թափով: Նրան օգնում են թնդանօթածիգները, որոնք շարունակում են կրկնապատկած ոյժով ուժեղանքով թիւրքաց դիրքերը. ժամ 4-ին, մօտենալով բերդի պատնէշներին, այս զօրքը կատաղի սւինամարտի է բռնում էմիր-Օղլիի պաշտպանների հետ և, դրանց յետ ու յետ մղելով, աջողացնում է մի խումբ քաշերով բերդ մտնել. լաւում է յաղթական «ուռա»-ն: Այդ միջոցին գալիս է մնացած զօրքը և, ցան ու ցիւր անելով բերդի պաշտպաններին, մտնում է էմիր-Օղլիի մէջ: Այդ բոպէին բերդի գլխին ծածանւում է ռուսաց յաղթական դրօշակը:

Նոյն ժամին հարաւային կողմից կատաղի գրոհով առաջանում է գեներալ Հէյմանի զօրքը և, կռիւ բռնելով ու քայլ առ քայլ փախուստի ստիպելով դիրքերի վրայ կռուող թիւրք զօրքին, Ամիրաշիբիի գնդի հետ գրեթէ

միաժամանակ ինքը ևս մտնում է էմիր-Օղլի: Թիւրքաց զօրքի մէջ սկսւում է փախուստը. առաջիններից փախչում է ամրութեան պաշտպան գնդապետ Կաֆտան Մահմեդ բէյը (վենգրիացի) և, հազիւ փրկելով մի քանի թնդանօթներ, զօրքի մի մասի հետ պատասպարւում է միջնաբերդում:

Ժամ 3-ից քիչ անց էմիր-Օղլի է մտնում ինքը՝ այս գոռ կուր հրամանատար Լօրիս-Մելիքեան իր թիկնապահներով: Զօրքը հանդիպում է նրան ոգևորւած ուռաներով: Հրամանատարը շնորհաւորում է զօրքին տարած փառաւոր յաղթութեամբ և այդ մասին հեռագրով աւետում է զօրքի գլխաւոր հրամանատար Մեծ Իշխանին, շնորհաւորելով «առաջին խոշոր յաղթութիւնով», որի ժամանակ զօրքը թշնամուց առել էր՝ 9 թնդանօթներ, բազմաթիւ հրացաններ, հրանօթներ, չհաշւած այն մեծաթիւ սպանւածներն ու վիրաւորւածները, որ ընկած էին այս կռուում: Ռուսների կորուստը այդ կռուում կայանում էր՝ սպանւած 14 զինւոր, վիրաւոր՝ 85 և չորս հոգի էլ վիրաւոր սպաներ:

Ճաշից յետոյ ժամ 4-ին Լօրիսը հրամայում է դադարեցնել կռիւը՝ վերսկսելու այն հետեւեալ առաւօտ, իսկ ինքը իր շտաբով և զօրքի մի մասով գնում է իր բանակատեղին՝ Ալագեազի սարալանջը, ուր և կազմում է յաջորդօրւան ձակատամարտի ծրագիրը, որը բաժանւում է զօրքի գլխաւորներին ի կատարումն:

Նոյն գիշեր Արդահան բերդում գինւորական խորհուրդ է տեղի ունենում: Բերդապահ Հուսէյն փաշան գտնում է, որ, կորցնելով Գիւլավերդի բարձունքները էմիր-Օղլի ամրութիւնով, որը Արդահանի արևելեան բանալին էր, ընդդիմադրութիւնը ապարդիւն է, ուստի առաջարկում է հէնց նոյն գիշեր ամբողջ զօրքով նահանջել Օլթի՝ փրկելու գոնէ 6 հազար հոգի բերդապահ զօրքը. Կաֆտան-Բէյ, համարելով այդ բանը ամօթալի, առաջարկում է դիմանալ իրանց ձեռքում մնացած ամրութիւններում մինչև

որ Օլթիից բերդին օգնութեան կհասնի թիւրքաց զօրքը: Լսելով այս յայտարարութիւնը, պատերազմական խորհուրդը՝ որոշում է կռիւը շարունակել, և նոյն գիշեր զօրքը նորանոր ամրութիւններ է կառուցանում Արդահանի մնացեալ հինգ ամրութիւնների առջևում: Յաջորդ օրը՝ մայիս 5-ին Լօրիս-Մելիքեանը նորից պատգամաւոր է ուղարկում բերդապահի մօտ, առաջարկելով անձնատուր լինել. պատասխանը ստացւում է կէսօրին, ժամը 2-ին: Հուսէյն փաշան համաձայն է բերդը տալ միայն թէ թոյլ տրւի բերդապահ զօրքին ամբողջովին՝ իր զէնքով, թնդանօթներով և բոլոր մթերքներով ու ինչքով զէնքը ձեռքին հեռանալ բերդից: Պարզ է, որ Լօրիս-Մելիքեանը մերժում է այս պայմանը և, չնայած ուշ ժամին, հրաման է տալիս յարձակման: Նորից սկսւում է թնդանօթային կրակը երկու կողմից էլ: Այս անգամ ոռուաց թնդանօթները գործում էին արդէն էմիր-Օղլիի բարձունքներից, ուր գտնւում էր գետերալ Հէյման իր զօրքով: Սա, շուտով թողնելով ամրութիւնը, Երևանի գվարդիայի և Բագլի գնդի մի մասի հետ իջնում է դէպի Արդահան տանող ձորակ. մի ժամից լսւում է ոռուաց «ուռա»-ների ձայնը՝ խառը թնդանօթների կատաղի որոտի հետ: Դա գետերալ Հէյմանն էր, որին աջողւել էր ոչ միայն մօտենալ Դագ-Թափասի ամրութեանը, այլ և բարձրանալ նրա ամբարտակներէ վրայ:

Այս համարձակ քայլը յանկարծակիի է բերում բերդի պաշտպաններին և նրանք, աննշան ընդդիմադրութիւնից յետոյ, փախչում են՝ պատասպարւելու բերդի միւս ամրութիւնների մէջ, որոնք նոյն ժամին ոռուաց կողմից ոմբակոծւում էին մի քանի ժամ շարունակ: Գետերալ Հէյման, վերցնելով Դաս-Թափասին, իսկոյն իր մի քանի վաշտով անցնում է նրա հարևան Սինգիր ամրութիւնը և, կոտրելով կամուրջները, անցնելով խրամաններից, երեկոյեան ժամ 6-ի մօտ կատաղի գրոհով վերցնում է և այս ամ-

բուժիչներ՝ հարիւրաւոր զոհեր գլորելով աջից ու ձախից: Թիւրք բերդապահ զօրքը, կարծելով, որ ինքը կտրւած է ամեն կողմից, մտածում է միայն մի բանի մասին՝ ազատել բերդի արևմտեան կողմից Քոն վրայի կամուրջով: Եւ ահա այս փախուստի ժամանակ սկսւում է մի նմանը չտեսնւած իրարանցում փախչողների մէջ, որոնց մեծ մասը թափւում է Քուռ գետ և այդտեղ իր մահը գտնում: Վերջին հերոսական ընդդիմադրութիւն թիւրք զօրքը ցոյց է տալիս բերդապահի տան մօտ, բայց, անկարող լինելով դիմադրել ոռուսաց եռապատիկ գերազանց ոյժերին, քաջերի այս խումբը մի փաշայով, 7 սպաներով և 321 զինւորներով անձնատուր է լինում: Շուտով ընկնում է նաև Ղայա-Բաշի ամրութիւնը և նրա վրայ ծածանւում է ոռուսաց յաղթական զօրջակը:

Երեկոյեան ժամ 8 և կէսին Արդահանը իր բոլոր ամրութիւններով անցնում է ոռուսաց ձեռքը: Նոյն ժամին բերդէ մտնում գեներալ-ադիւտանտ Լօրիս-Մելիքեան, որը թէ երէկ և թէ այդ օրը անձամբ, առանց մի ժամ հանգիստ ունենալու, դեկավարում էր ամբողջ ճակատամարտը՝ իր բոլոր կէտերում և բոլոր մասերով: Երբ Լօրիսը մտնում է Արդահան, զօրքն ու քաղաքացի ժողովուրդը անվերջ ուռններով ու երաժշտութեամբ ողջունում են նրա գալուստը և տարած փառաւոր յաղթութիւնը: Լօրիսը, այս յաղթութիւնը ամբողջովին վերագրելով քաջ զօրքին ու նրա հրամանատարներին, թոյլ է տալիս որ այդ գիշեր զօրքը անցնի խրախճանքի մէջ, իսկ ինքը, հրաման արձակելով վերցնել հեռու ընկած Ռամազան-թափայ միակ լաւ ամրութիւնը, բերդն առնելու մասին հեռագրում և շնորհաւորում է Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլաևիչին:

Եւ այսպէս, մայիս 6-ին Արդահան բերդի հետ ոռուս զօրքին, որպէս յաղթական աւար, մնում են գերիներ՝ Ալի Օսմանդէր փաշան 15 սպաներով, 600 զինւորներ, հի-



Երևանեան Օտրևադի հրամանատար
Գեներալ-Լէյտնանտ
ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ

Լանդանոցը 12 բժիշկներով, 12 ֆելդշերներով, 92 թնդանօթ, ահագին քանակութեամբ պատերազմական պաշարայն է՝ 1179 հրացաններ, 6507 թնդանօթային ուումբեր, 6 միլիոն փամփուշտ, 1106 տակառ վառօդ և 11 ամբարներ ամեն տեսակ ուտելիքներով—բոլորը մօտաւորապէս 4—5 միլիոն արժողութեամբ:

Այս պատերազմում թիւրքերը կորցնում են 1148 հոգի սպանւած: Ռուսաց զօրքի կորուստը լինում է՝ սպանւած 68 հոգի և վիրաւոր՝ 352 հոգի, որից 10-ը սպաներ:

Այս յաղթութեան համար գեներալ-ադիւտանտ Լօրիս-Մելիքեան պարգևատրւում է Գէորգիի 3 աստիճանով և Բարձրագոյն շնորհակալութեամբ:

Նոյն գիշեր, երբ ուս զօրքը մօտենում է Ռամազան թէփիի ամրութեանը, տեսնում է, որ սա թողնւած է իր պաշտպաններից առանց հրացանի մի զարկի: Բերդապահ զօրքից ազատւում են փախուստով 5000 մարդ:

7. Ռուս զօրքի առաջխաղացումը եւ Ղարսի առաջին պաշարումը.

Թուրք զօրաբանակի հրամանատար Մուխթար փաշան, տեսնելով ուս զօրքի համարձակ քայլերը, ուսաց զօրաբանակի մասին թիւր հասկացողութիւն ունէր. նրան հաւատացրել էին, թէ լրտեսները և թէ ուս բանակի հետ գործ ունեցող անձինք, որ ուս զօրաբանակը թւով կրկնակի գերազանց է թիւրքական գործող բանակից. և ահա, անհնար համարելով իր ձեռքի տակ ունեցած ոյժերով պատերազմի բռնւել ուսաների գերազանց ոյժերի հետ, նա, ինչպէս տեսանք, թողնում է Ղարսը նրան պաշարող ուս զօրքի ձեռքում և ինքը մի զօրամասով գնում է Արզրում՝ ուժեղացնելու իր զօրքը նորանոր գնդերով:

Եւ ճիշտ որ, շնորհիւ ձեռք առած միջոցների Մուխ-

Թար փաշային աջողուում է, չհաշված Ղարսի բերդապահ մօտ 15,000 զորքը, Անատոլիական բանակի զորքերի ընդհանուր թիւը հասցնել 47,000-ի, որի մէջ մտնում էին նաև մօտ 10 հազար կամաւորներ՝ քրդերից, բաշի-բուզուկներից, չերքէզներից և դարափափախներից—բոլորն էլ լաւ զինւած: Այդքան զօրքով Մուխթար փաշան յոյս ունէր ոչ միայն Ղարսի գեներալ Տէր-Ղուկասեանի Բայազետի վրայ գնացող զօրամասը, այլ և արշաւել Իգդիրի վրայ, այդտեղից գնալ Երևան, իսկ յետոյ նոյն զօրքի գլխաւոր ոյժերով գալ Ղարս՝ հարւածելու Լօրիս-Մելիքեանի հրամանատարութեան տակ գտնւած զօրքին:

Մուխթարի այս ծրագիրը, որ յայտնի էր Լօրիսին, չէր կարող անհանգստութիւն չպատճառել նրան, մանաւանդ որ Դաղստանում և թէ ընդհանրապէս Անդրկովկասում մոլոսովման ազգաբնակիւթիւնը անհամբեր սպասում էր տաճիկ յաղթական զօրքին՝ միանալու նրա հետ և ապստամբութեան դրօշը պարզելու կովկասում:

Թուրք հրամանատարի այս ծրագիրը խախտելու միակ միջոցը Լօրիս-Մելիքեան գտնում էր նրանում, որ թոյլ չտայ Մուխթարի զօրքին միանալու Ղարսի բերդապահ զօրքի հետ. իսկ դրա համար նրան հարկաւոր էր՝ իր զօրքի մի մասը թողնելով Ղարսի պարսպի տակ, միւս մասով առաջ անցնել դէպի Սօղանլուխ՝ կտրելու էրզրումից Ղարս տանող ճանապարհը և այդտեղ շարդ տալու Մուխթար փաշայի բանակին, նախ քան սա կմտնէր Ղարս:

Եւ անա այս նպատակով Լօրիսը իր զօրքը բաժանում է երկու մասի. մէկը, տալով գեներալ Հէյմանին, ուղարկում է պաշարելու Ղարսը հարաւ արևմտեան կողմից, իսկ սրա մի զօրամասը ուղարկում է Արզրում տանող ճանապարհով դէպի Սողանլուխ, նախառաջելու Մուխթարի գալուստը, իսկ միւս մասը, յանձնելով գեներալ Դէվէլին պատւիրում է՝ շարունակելով Ղարսի պաշարումը միաժա-

մանակ ցուցադրական շարժում անել Ղարսի դէմ հիւսիս արևելեան կողմից և դրանով զբաղեցնել բերդապահ զօրքը հէնց բերդի սահմաններում:

Հէյմանի ձիաւոր զօրամասը, գեներալ-մայօր իշխան Չաւչաւաձէի գլխաւորութեամբ, ընթանալով դէպի Սօղանլուխ, մայիս 17-ին Բէգլի-Ահմեդի մօտ հանդիպում է ռուս զօրքում ծառայած և այժմ օսմանցոց կողմն անցած Մուսա-փաշա Կոնդուխովի առաջապահ զօրքին, որին ուղարկել էր Մուխթարը անհանգստացնելու ռուս զօրքը Ղարսի շրջանում: Այստեղ գիշերը ռուս զօրամասը անսպասելի կերպով յարձակւում է Կոնդուխովի 1500 հոգուց բաղկացած չերքէզ զօրքի վրայ և, մեծ շարդ տալով ու խլելով երկութիւն, ցրում է դրան: Սրանով ռուս զօրքը մի անգամ ընդ միշտ ազատւում է չերքէզների կազմակերպած յարձակումների վտանգից—որով և ի դերև են հանւում Մուխթար-փաշայի այն յոյսերը, որ նա դրել էր այս զօրքի վրայ:

Այս քաջարի գործ կատարելուց յետոյ, իշխան Չաւչաւաձէն իր հեծելազօրքով վերադառնում է գեներալ Հէյմանի զօրամասը, որ բանակել էր Ղարսի հարաւային կողմում՝ Մեծ-Թիքմայի մօտ—Ղարսաշայի ափին:

Մինչդեռ գլխաւոր կորպուսի բոլոր ոյժերը կենտրոնացնելով Ղարսի շուրջ Լօրիս-Մելիքեանը մտածում էր խիստ պաշարումով ստիպել բերդապահ զօրքին անձնատուր լինել, լուր է ստացւում, որ Մուխթար-փաշան գերազանց ոյժերով գնում է Ալաշկերտ Տէր-Ղուկասեանի զօրքերի վերայ: Եւ անա, որպէսզի կարելի լինի փրկել Տէր-Ղուկասեանի փոքրաթիւ զօրամասը վերահաս վտանգից, որոշւում է արագացնել Ղարսի պաշարումը և դրանով ստիպել Ղարսի բերդապահ զօրքին օր առաջ անձնատուր լինել. միայն դրանից յետոյ կարելի էր բոլոր զօրքով գնալ Մուխթարի վրայ:

Ղարսի նման առաջնակարգ բերդը պաշարելու համար անհրաժեշտ էր նախ՝ մեծ թւով պաշարողական խոշոր թըն-

դանօթներով շրջապատել նրա բոլոր եօթ ամրութիւնները և ապա թէ ումբակոծել ամրութիւններն ու բերդը:

Սկսուում է այդ ծրագրի իրագործումը. մեծ մասամբ գիշերները բերդերի դէմ գտնւող լեռների վրայ Լօրիս-Մելիքեանը հրամայում է նոր ամուր դիրքեր շինել ու նրանց վրայ պաշարողական թնդանօթներ ամրացնել:

Որպէսզի կարողանայ անձամբ մասնակցել և ղեկավարել Ղարսի պաշարման գործողութիւններին, մայիս 27-ին բանակ է գալիս զօրքի գլխաւոր հրամանատար Մեծ-Իշխան Միխայիլ Նիկօլայեւը. իսկոյն զինւորական խորհուրդ է կազմուում, ուր, իրերի դրութիւնը մանրամասն քննելուց յետոյ, որոշում է՝ պաշարումը սկսել ոչ թէ բոլոր ամրութիւններից, այլ սկզբում միայն երկու գլխաւոր ամրութիւնների վրայ՝ Ղարադաղի, Շորախի, և ապա, թուլացնելով սրբանց, դիմել մնացեալ ամրութիւնների ումբակոծութեանը:

8. Արեւաւան գէպի Զիւին և վերադարձը

Մինչդեռ գլխաւոր բանակում լուրջ պատրաստութիւններ էին տեսնում յունիսի սկզբներին սկսելու Ղարսի ուժեղ պաշարումը, լուր եկաւ, որ Տէր-Ղուկասեանի զօրամասը նեղւում է Մուխթար-փաշայից և գեներալը մեծ կարիք ունի օգնական զօրքերի: Այս հանգամանքը ստիպեց փոխել սկզբնական ծրագիրը. այժմ որոշւեց, թողնելով Ղարսը պաշարելու համար մօտ 18 հազար զօրք, 14 հազար զօրք գեներալ Հէյմանի հրամանատարութեամբ ուղարկել Սողանլուխ, յուսով, որ Մուխթարը, վախենալով որ ոռուսաց զօրքը կարող է գնալ Արզրումի վրայ, կթողնի Տէր-Ղուկասեանին և կգայ պաշտպանելու Սողանլուխի ճանապարհը. գրանով Տէր-Ղուկասեանը հնար կունենայ նահանջել Իգդիր:

Ի կատարումն այդ ծրագրի յունիս 9-ին գեներալ Հէյման իր զօրամասով Սարիղամիշի վրայով ճանապարհ

է ընկնում դէպի Սողանլուխ. այստեղ իմացուում է, որ Մուխթարը, լսելով մեր արշաւի մասին, իր զօրքերի մեծ մասը ուղարկում է այս ճանապարհի վրայ: Եւ այսպէս ոռուս զօրքը իր նպատակին հասել էր. Տէր-Ղուկասեանին մնում էր գործ ունենալ համեմատաբար աւելի փոքրաթիւ զօրքի հետ, որի հետ հաշիւ տեսնել նա կարող էր և իր զօրամասով:

Այժմ ոռուս զօրքը գնում էր Զիվինի վրայ, ուր գրտնւում էր Արզրումի Վալի Իսմաիլ-փաշան և որին, ինչպէս ասացինք, օգնութեան էր գալիս Մուխթարը իր գերազանց ոյժերով: Գեներալ Հէյմանը յոյս ունէր ոչ միայն վերցնել Զիվինը, այլ և շարդել Իսմայիլ փաշային նախքան կգար կհասնէր Մուխթարը իր զօրքերով:

Չորս օրվայ արշաւից յետոյ՝ յունիս 13-ին ոռուսաց զօրամասը շրջապատում է Զիվինը և սկսում է յարձակումը, սակայն յարձակումը անցնում է անաջող. Զիվինը, շնորհիւ իր բնական աննման դիրքի միժամանակ նաև արհեստապէս շատ լաւ ամրացւած էր. բացի դա ինքը թիւրք զօրքը վերին աստիճանի ոգևորւած կուում էր և քաջաբար գրեթէ բոլոր դիրքերից խոշոր կորուստներով վանում ոռուսներին: Չցանկանալով անտեղի և աւելորդ զոհեր տալ, մանաւանդ որ, ինչպէս ասեցինք, զօրամասը իր նպատակին հասած էր՝ Մուխթարը հեռացել էր Տէր-Ղուկասեանից, Լօրիսը հրամայում է Հէյմանին իր զօրամասը յետ դարձնել Ղարս:

Յունիս 24-ին Հէյմանի զօրամասը մեծ զգուշութեամբ ճանապարհւում է և, թիւրքաց զօրքի հետ մի շարք ընդհարումներ ունենալուց յետոյ, մօտենում է Ղարսին, ունենալով իր կոնակում Մուխթար-փաշայի ուժեղ զօրքը. այստեղ Հէյմանը միանում է գլխաւոր բանակին:

9. Ռուս զօրքի նահանջը

Այժմ, երբ Ղարսին օգնութեան էր գալիս Մուխթար փաշան իր աւելի քան 35 հազար զօրքով, պաշարած պա-

հել Ղարսը, յուսարով որ նա շուտով կնկնի, աներևակայելի էր, նամանաւանդ եթէ հաշւի առնենք, որ Լօրիսի զօրքը համեմատաբար աւելի փոքրաթիւ էր օսմանեան զօրաբանակից: Մնում էր մի միջոց՝ թիւրքերից անհատելի կերպով թողնել Ղարսի պաշարումը, տանելով նրա շուրջը հաստատուած թնդանօթները և զգուշութեամբ յետ նահանջել դէպի Արփաշայի ոռուսաց սահմանը մինչև որ կորպուսը Ռուսաստանից կատանար խոստացուած օգնական զօրք: Այս որոշումը ընդունեց գլխաւոր բանակում և յունիս 24-ից ոռուսները սկսեցին նահանջի պատրաստութիւններ տեսնել, սակայն այնպիսի գաղտնապահութեամբ, որ երբ յունիս 27-ի գիշերը ոռուսների ամբողջ բանակը հեռացել էր Ղարսի շրջակայքից, միայն յաջորդ օրը Ղարսի բերդապահ զօրքը նկատեց այդ ուղեց շարժել, բայց արդէն ուշ էր, նահանջը կատարուած էր և նոր դիրքերը բռնուած:

Այն ինչ եթէ Մուխթար-փաշան մի քանի օր առաջ իմացած լինէր ոռուս զօրքի նահանջի պատրաստութիւնը, նրան շատ հեշտ էր յարձակել ոռուս բաժան-բաժան զօրամասերի վրայ, տարով նրան այնպիսի մի ջարդ, որի հետևանքները կարող էին մեծ ազդեցութիւն ունենալ ամբողջ պատերազմի ընթացքի վրայ:

Այս նահանջը, որ կատարուեց շնորհիւ Լօրիսի արտակարգ ընդունակութիւնների ու հեռատեսութեան՝ երբ ոռուս բանակը, ունենալով իր ետևում մօտ 45—48 հազար թշնամի զօրք, չկորցրեց և ոչ մի գինւոր և, որ գլխաւորն է, ոչ դաշտում և ոչ թշնամու ձեռքում չթողեց և ոչ մի հատ հրացան կամ ուղիղութեամբ, համարւում է զինւորական պատմութեան մէջ ուղիղագիտական ամենանշանաւոր դէպքերից մէկը, դարձնելով Լօրիսին յայտնի տաքտիկ ոչ միայն ոռուս զօրքի մէջ, այլ և ընդհանրապէս համաշխարհային ուղիղ պատմութեան մէջ:

10. Ալաշայի կուի սկիզբը

Մուխթար-փաշան ձեռքից բաց թողնելով ոռուս բանակին Ղարսի պարիսպների տակ ջարդելու նպատաւոր առիթը, միացնում է իր զօրքին Ղարսի բերդապահ գնդերը և, դուրս գալով քաղաքից, գնում է դէպի Արփաշայ ու այստեղ՝ Ղարսից 20—25 վերստ հեռու, բռնելով Ալաշայի լեռները, ամրանում է նրա մի շարք բարձրութիւնների վրայ: Եւ որովհետև ոռուս բանակին մինչ այդ աջողել էր բռնել Ալաշայի հիւսիսային տարածութիւնը՝ Սուբօթանի, Հաջի-Վալիի և Ղըզըլ-Թափայի բարձունքներում, ուստի պարզ էր, որ երկու բանակների բախտը որոշող մեծ ճակատամարտը տեղի էր ունենալու հէնց այստեղ՝ այս լանջերում: Ալաշայի յաղթութեան դէպքում Մուխթարը ազատօրէն կարող էր անցնել ոռուսաց սահմանը և Ջաջուրի լեռնանցքի վրայով արշաւել ուղղակի Թիֆլիս, ուր ճանապարհին նրան կմիանար Անդրկովկասի միլսուլման ազգաբնակչութիւնը, որի մէջ դեռ պատերազմից առաջ և հէնց այժմ ուժեղ և յաջող պրոպագանդա էին մղում օսմանեան լրտեսներն ու էմիսարները. այդ դէպքում Անդրկովկասի ոռուսաց ձեռքում մնալն իսկ խիստ թէական էր, իսկ Թիֆլիսի զրաւումը՝ կասկածից դուրս,

Այս բանը շատ լաւ հասկանում է Լօրիսը և վճռում ինչ գնով և լինի դիմադրել Մուխթարին և, նրա բանակը ջարդելով, ոչնչացնել այդ ծրագիրը: Այդ նպատակը իրագործելու համար նա անհամբեր սպասում էր Ռուսաստանից 40-երորդ դիվիզիայի գալուն, իսկ մինչ այդ միացնում է իր բանակին նաև Արդահանում գտնուած և Ռիօնի բանակից եկած ոյժեր՝ մօտ 6000 հոգի: Վերջապէս, յուլիսի սկզբին, երկու ամսւայ ճանապարհորդութիւնից յետոյ, գալիս հասնում է 40-երորդ դիվիզիան բաղկացած 11,000 հոգուց: Այժմ միայն Լօրիսի զօրքերի ընդհանուր

Թիւը հասնում է՝ 46 բատալիօնի, 8 էսկադրոնի, 66 հարիւրակի որ կանի մօտ 50,000 կուռո՛ղ՝ 164 թնդանօթնե-րով: Ահա այս ոյժերով Լօրիսը վճռում է պաշտպանողա-կան դրութիւնից անցնել յարձակողականի և, ուժեղ ճա-կատամարտում Մուխթարի բանակը ջարդելուց յետոյ, դուրս քշել նրան Արփաշայի մօտերից, փակել իրան և զօրքը Ղարսում: Մակայն հէնց այդ ժամանակ լուր է ստացւում գեներալ Տէր-Ղուկասովից, որ նա Իսմայիլ փաշային ջարդելու համար իր ունեցած զօրքը համարում է փոքրաթիւ, անբաւարար, ուստի կորպուսից գլխաւոր ոյ-ժերից օգնական զօրք է խնդրում: Որչափ և անժամա-նակ էր ներկայումս հազիւ կենտրոնացած ոյժերի ջլա-տումը, սակայն Լօրիսը յուլիս 15-ին մօտ 6,000 զօրք տալով գեներալ Յիթովիչին, ուղարկում է Երևանեան զօրամասին օգնութեան:

Թէև նւագած զօրքով այնուամենայնիւ Լօրիսը վը-ճռում է սկսել իր գործողութիւնները թիւրքաց բանակի դէմ, մանաւանդ որ Մուխթարը արդէն սկսել էր մի շարք յարձակումներով անհանգստացնել ոռւս զօրքին:

Օգոստոս 6-ին առաւօտեան շուտ սկսում են պատե-րագմական հետախուզումները՝ որոնցով Լօրիսը նպատակ ունէր իմանալ թշնամու ոյժերի քանակը, Ալաշայի ամ-բուրութիւնների բնոյթը, հակառակորդի տեղադրութիւնը, նրա զինման և պաշտպանութեան միջոցներ և, վերջապէս, այն, թէ որտեղից աւելի յարմար է սկսել գրոհը: Այդ հետա-խուզումին, որ լուրջ ճակատամարտի բնոյթ ընդունեց, մասնակցում էին երկու կողմերի ոյժերի գրեթէ 70-⁰/₁₀₀ը: Օգոստոս 6-ին տեղի ունեցած զօրաշարժումները գլխովին բացում են թշնամու ռազմագիտական ոյժն ու դիրքերի բնոյթը. դրանից յետոյ մնում էր դիմել ճակատամարտին:

Եւ ահա այնինչ ոռւս զօրքը լուրջ պատրաստու-թիւնների վրայ էր և Լօրիսը նախագծում էր առիջիկայ

մեծ ճակատամարտի մանրամասն ծրագիրը, թիւրք զօր-քերի գլխաւոր հրամանատարը ևս անգործ չէր: Չանձրա-նալով Ալաշայի վրայ երկար նստելուց և ապարդիւն պա-շար ու ռազմամթերք սպառելուց, նա որոշել էր դիմել յարձակման, նամանաւանդ որ Պօլսում անհամբերու-թեամբ սպասում էին այս վճռական կուլին և հեռագիր-հեռագրի ետեից ստիպում էին Մուխթարին վերջ տալ իր անգործունէութեանը: Եւ յարմար առիթը հանդէս է գա-լիս. գեներալ Տէր-Ղուկասեանը, ցանկանալով գաղտնի կերպով յարձակել Իսմայիլ փաշայի վրայ և ստացած բատալիօնները համարելով անբաւարար, նորից նոր օգնա-կան զօրք է խնդրում Լօրիսից. սա ամենամեծ դժկամա-կութեամբ, հնազանդւելով միմիայն Մեծ-Իշխանի պահան-ջին, այս վճռական օրերին ստիպւած է լինում իր զօր-քից դարձեալ բաժանել 7 հազար հոգուց բաղկացած զօ-րամաս և 12 թնդանօթներով գեներալ Դէվէլի հրամանա-տարութեամբ օգոստոս 11-ին ուղարկել Կողպի վրայով Տէր-Ղուկասովին: Այդ զօրամասը գնալուց յետոյ*) Լօրիսի կորպուսում գործող զօրքերի թիւը 50 հազարից իջաւ և հասաւ 35 հազարի, այն ինչ Մուխթար փաշան ունէր ոչ պակաս 55 հազար կուռոյներ: Վերջինս տեղեկանալով, որ Լօրիսից պակասել են 7—8 բատալիօն, յարմար համարեց անմիջապէս յարձակել ոռւս զօրքի վրայ. և ահա օգոս-տոս 12-ի լոյս 13-ը գիշերւան ժամ 2-ին Մուսա-բէյ Կունդուխովի 10 հազար հոգուց բաղկացած զօրամասը անսպասելի կերպով յարձակւում է Ղըզլի-Յափայի վրայ, ուր բանակել էր ոռւսաց զօրքի առաջապահ մասը: Ռոռս զօրքը յանկարծակիի գալով ամբողջ օրը դիմադրում է թիւրքաց գերագանց ոյժերին մեծ զոհեր հասցնելով

*) Մի քանի օրից Դէվէլի այդ զօրամասը կէս ճանապար-հից յետ է բերւում և նա մասնակցում է Ալաշայի ճակատա-մարտին: Ս. Մ.

նրան և ինքն էլ իր կողմից կորցնելով մօտ հազար հոգի սպանւած ու վիրաւոր, տալիս է Զրգըլ-Քափան թշնամուն և յետ է քաշում դէպի Բայրախտար: Այս անաշող կռուում սակայն ոսներին յաջողուում է խլել թշնամուց 6 թնդանօթներ, առանց նրանց ձեռքում թողնելու նոյն իսկ մի հատ հրանօթ:

Զրգըլ-Քափայի առման լուրը հեռագրով աւետելով Պօլիս, այնտեղ առաջ է բերում մեծ ուրախութիւն, քանի որ Պօլսում այս կռիւր համարւում էր վճռական ճակատամարտ և փառաւոր յաղթութիւն՝ որ տանում էր Օսմանեան բանակը ոռւս զօրքից: Այս գործի համար Մուխթար փաշան վարձատրւում է ղազիի (Փելդմարշալ) բարձր տիտղոսով: Պօլսում հաւատացած էին, որ այս յաղթութիւնից շանցած մի շաբաթ Մուխթարը կլինի թիֆլիզում: Սակայն այս յոյսերը չարդարացան...:

11. Ալազայի վնուական ֆակասամարսը եւ յաղթութիւնը

Օգոստոս 14-ին կորպուսի կենտրոնատեղ՝ Քիւրիւբ-Դարա է գալիս զօրքերի գլխաւոր հրամանատար Մեծ-Իշխան Միխայիլ Նիկօլաեիչը: Տեղի է ունենում զինւորական խորհուրդ, որը վճռում է նախ՝ տեղափոխել զօրամասերը այս և այն յարմար դիրքերի վրայ և ապանկատի ունենալով զօրքի թւական թուլութիւնը, որոշուում է սպասել Ռուսաստանից եկող Գրենադերեան 1-ին դիվիզիային. ուժեղացնելով դրանցով իր բանակը, Մեծ-Իշխանը հնարաւոր էր համարում այս անգամ անցնել յարձակողական գործողութեանց, իսկ մինչ այդ դիվիզիայի գալը ոռւս զօրքին մնում էր աւելի ու աւելի ամրացնել իր դիրքերը, շինել նորանոր ամրութիւններ և մանր յարձակումներով թշնամուն պահել մշտական անհանգստութեան մէջ:

Վերջապէս սեպտ. 13-ին գալիս բանակին է հասնում Գրենադերեան առաջին դիվիզիան, 12,000 հոգով և ապա

հասնում է Արդահանից նաև գեներալ Կամարովի զօրամասը մօտ 5 հազար հոգի: Միայն այժմ էր, որ Լօրիսի բանակը մարդկանց թւով հաւասարում էր Մուխթար փաշայի զօրքին: Այդ պահին կորպուսի գլխաւոր ոյժերի կազմը հետևեալն էր՝ 60 բատալիօն հետևակ, 12 էսկադրոն, 86 հարիւրեակ կամաւոր միլիցիօնէր ձիաւորներ և 240 թընդանօթ:

Այս ոյժերի գալուց յետոյ զինւորական խորհրդում ճակատամարտի օրը նշանակուում է սեպտ. 20-ը: Ամբողջ ոռւս բանակը բաժանւում է չորս մասերի՝ ա) գեներալ Հէյմանի զօրամասը, որ պէտք է վերցնէր Մեծ-Շահնիի, Վիզին-Քեօյի և Աւիարի ամրութիւնները բ) գեներալ Րոպպի զօրամասը՝ որ յարձակելու էր Փոքր-Շահնիի վրայ, գ) գեներալ Յ. Լազարեանինը, որը ուղարկւում էր թշնամու աջ թևի վրայ, իսկ գեներալ Շելկովիկովի զօրասիւնը պէտք է մտնէր Մուխթարի զօրքի թիկունքը:

Այս ճակատամարտը ղեկավարում էր Մեծ-Իշխան Միխայիլ Նիկօլաեիչը որպէս գլխաւոր հրամանատար, իսկ Լօրիսը ի կատար էր ածում այն ծրագիրը, որ ընդունւած էր սեպտեմբեր 20-ին այս ճակատի համար: Գրեթէ կէս գիշերին բոլոր զօրամասերը դուրս են գալիս բռնելու իրանց դիրքերը. սակայն լոյսը բացւելուն պէս նկատուում է որ, շնորհիւ մթութեան, զօրամասերից մի քանիսը փոխանակ որոշւած տեղերը բռնելու կամ նրանցով գնալու, խոշոր սխալների մէջ են ընկել: Լօրիսի առաջին գործն լինում է կանոնաւորել զօրքերը և նրանց իրենց նպատակին տանել որչափ կարելի է քիչ կորուստներով, քանի որ Մուխթարը, նկատելով ոռւս զօրքի անաշող շարժումը, արդէն սկսել էր իր յարձակումներն ու ընդդիմադրութիւնը: Այս ճակատամարտը տևեց երեք օր՝ սեպտ. 20, 21 և 22-ին, որի ընթացքում տաք կռիւններ ծագեցին Հաջի-Վալիի դիմաց, ապա մեծ

ընդդիմադրութեան հանդիպեց զօրքը Փոքր-Յաղնիի լանջերում, մանաւանդ Աւլիարի նշանաւոր դիրքը ձեռք գցելու ժամանակ և Ալաշայի ամրութիւնները խլելուս. սակայն ուսաց զօրքին չի վիճակուում այս երեք օրւայ մէջ առանձին յաջողութիւններ ձեռք բերել և նա, հանդիպելով Մուխթարի աչալըջութեանն ու թիւրքաց զօրքերի քաջութեանը, մնում է իր նախկին դիրքերում, կորցնելով մօտ 2,000 հոգի և թշնամուց էլ կրկնակի զոհեր խլում:

Այս կռիւները այն հետեանքն է ունենում, որ Մուխթարի զօրքը թուլանում է և, որ գլխաւորն է, նրա բանակի մէջ արդէն զգացուում է թէ ուտելիքի և թէ ուղիւ մամթերքի մեծ պակասութիւն, իսկ դրանց Ղարսից ստանալը, շնորհիւ ուսաց զօրքի նրա ճանապարհներին չափազանց մօտիկութեանը, դարձել էր խիստ վտանգաւոր: Այս պայմանների մէջ Մուխթարին մնում էր մի բան՝ օր առաջ յետ քաշել դէպի Սօղանլուխ՝ աւելացնելու և կարգի բերելու իր քայքայուած ոյժերը: Եւ, ճիշտ որ, սեպտեմբեր 26-ին, մութն ընկնելուն պէս, Մուխթարը ամենամեծ զգուշութեամբ սկսում է դուրս տանել Ղրզըլ-Թափայ դիրքերից թնդանօթները, իսկ գիշերւայ ժամ 12-ին զօրքը թողնում է նաև Սուբութանի ու Հաջի-Վալիի ամրացրած դիրքերը, որոնց պահելու և տիրելու համար դեռ մի երկու օր առաջ այնքան արիւն էր թափել երկու կողմերից: Սկզբում կարծուում էր, որ Մուխթարը ամրացել է Ղարսում, սակայն շուտով պարզուում է, որ նա հագիւ շարժել է Ալաշայի հիւսիսային լանջերից, սրտեղից արդէն նրան հեշտ էր կամ քաշել Ղարս կամ թէ գնալ դէպի Սօղանլուխ՝ միանալու Իսմայիլ-փաշայի զօրքերի հետ, որոնք շտապով գալիս էին Ղարս: Թշնամու մօտ լինելը և այն էլ այս պայմաններում ոգևորում է ուս զօրապետներին. ուստի որոշուում է՝ նախ քան

Մուխթարը կշարժւի տեղից, կտրել նրա առաջը և, թիկունքից ու ճակատից նրա բանակի վրայ յարձակելով, շարդ տալ: Այս ծրագրով էլ գեներալ Յ. Լազարեանին յանձնուում է շրջել Մուխթարի աջ թևը, աշխատելով կտրել նրա նահանջի ճանապարհը, իսկ միւս զօրամասերը ուղարկուում են բռնելու Մեծ-Յաղնիի, Հաջի-Վալիի, Ղրզըլ-Թափայի և Ինախ-Թափայի ամրութիւնները, չընայած որ այս վերջինի վրայ դեռ ևս գտնուում էր Մուխթարի զօրքերի մի մասը:

Այս ծրագրի իրագործման ամենամեծ և վճռական մասը պատկանում էր գեներալ-լէյտենանտ Լազարեանին, որից և կախած էր ճակատամարտի արդիւնքը:

Ալաշայի պատմական ճակատամարտը, որ սկսեց սեպ. 27-ին և վերջացաւ միայն հոկտեմբեր 3-ին, կատարեց համաձայն գեներալ Օբրուչևի կազմած ծրագրի, որ քննութեան առնւեց և հաւանութիւն գտաւ զինւորական խորհրդում:

Այդ կռիւներում ուս զօրքը ցոյց տւեց իր բոլոր առաւելութիւնները՝ այն է մեծ տոկունութիւն, զարմանալի քաջութիւն և ընդդիմադրելու յամառութիւն, իսկ կորպուսի հրամանատարը՝ գեներալ Լօրիս-Մելիքեանը սրանցում արտայայտեց իր մի շարք անգնահատելի յատկութիւնները՝ մեծ աչալըջութիւն, դրութեան լըջութիւնն ըռպէսպէս ըմբռնելու ընդունակութիւն և ըստ այնմ այս ու այն զօրամասին՝ լինէր նա մեծ թէ փոքր, իր ժամանակին հարկաւոր օգնութիւն հասցնելու կարողութիւնը: Թիւրքաց զօրքը նոյնպէս այս ճակատում ապացուցեց ամենակրիտիքական ըռպէներում դիրքեր բռնելու և մինչև վերջին շունչ կուելու լաւ զինւորի բարձր յատկութիւնները, որոնցից, դժբախտաբար, գլխովին զուրկ էին նրա սպաները, որոնք, հէնց առաջին անաջողութիւնից յետոյ մտածում էին միմիայն իրանց անձր փրկելու մասին: Եւ այս-

պէս, չնայած թիւրքաց զօրքի յամառ ընդդիմադրութեանը, գեներալ Լազարեանի արշաւը՝ ուղղւած թշնամու թիկունքի վրայ, որով կտրեց նրա փախուստի ճանապարհը և իր զօրաբաժնով շեշտակի ու անսպասելի կերպով յարձակեց Վիզին-Քէօյի ամրութիւնների վրայ, վճռեց կուրի ճակատագիրը: Թիւրք զօրապետները, տեսնելով որ իրենց դիրքերը մէկը միւսի յետևից ընկնում են թշնամու ձեռքը և զօրքը իրար զոհեր է տալիս, թուլացան և բռնեցին փախուստի ճամբան. բայց այդ ևս նրանց չօգնեց. Լօրիսը հրամայեց հետևել թշնամուն, կտրել նրա առաջը և գերել:

Մինչդեռ ոռու զօրքերը զբաղւած էին այդ գործով, Վիզին-Քէօյ եկաւ Մեծ-Իշխանը միւս հրամանատարների հետ՝ շնորհաւորելու հոկտեմբեր 3-ի մեծ յաղթութիւնը. միակ Չիֆթի-Թափասին էր մնում, որ դեռ շարունակում էր ընդդիմադրել. սակայն լուր եկաւ, որ նա ևս շրջապատւած ամեն կողմից դրա վրա գտնւած բանակով անձնատուր է լինում. մնում էր միայն պայմաններ մշակել: Գիշերւայ ժամ 10-ին այդտեղ գնաց Լօրիսը և վերջնականապէս լուծեց բանակի անձնատուր լինելու բոլոր մանրամասնութիւնները:

Ալաշայի բարձունքներում տեղի ունեցած ճակատամարտներում օսմանեան զօրքը կրեց խոշոր կորուստներ. այն է՝ սպանւեցին մօտ 8500 հոգի և վիրաւորւեցին 10,000-ից ակելի. կենդանի մնացածներից անձնատուր եղաւ 27 բատալիքն այսինքն մօտ 9800 հոգի, որոնց թուում՝ 7 փաշայ, 252 սպաներ և զօրքից մի քանի հազար ծառայողներ: Որպէս պատերազմական աւար ոռուսաց ձեռքն են անցնում՝ 8000 հրացան, 29 թնդանօթ և շահագին թուով ու քանակութեամբ ռազմամթերք:

Ալաշայի կռուում զազի Մուխթար-փաշայի 40 հազարանոց բանակից ազատւեցին միայն 5 բատալիօն և 14 թնդանօթներ, մնացեալ զօրքը մօտ 12,000 հոգի, նամա-

նաւանդ անկանոնը, օգտուելով գիշերային մթութիւնից, փախաւ Ղարս, վայր գցելով գէնքերն ու սպառազինութիւնը: Ազատեց, փախուստի դիմելով և ինքը՝ թիւրքաց բանակի գլխաւոր հրամանատարը՝ Ղազի Մուխթար-փաշան: Սա դեռ ևս հոկտ. 3-ի առաւօտեան, գիտակցելով որ ճակատամարտը տարւած է և իրեն փրկելու ոչինչ չի մնում, այն ինչ բանակում մնալով կարող էր գերի ընկնել, իր թիկնապահներով փախչում է և պատասպարում Ղարսում, ուր այդ պահին տիրում էր աննկարագրելի սարսափ. քաղաքացիները, ստանալով զօրքի պարտութեան ոյժը, սկսում են փախուստի դիմել, իսկ քաղաքում մնացածները մտնում են նկուղներ և թաքստեան այլ տեղեր՝ անհամբեր սպասելով ոռու զօրքի երեւուլուն քաղաքի մէջ:

Հոկտեմբեր 3-ի Ալաշայի յաղթութեան համար զօրքի գլխաւոր հրամանատար Մեծ-Իշխան Միխայիլ Նիկօլակիչ պարգևատրուում է զինւորական ամենաբարձր շքանշանով՝ Գէորգիի I-ին աստիճանով, իսկ կորպուսի հրամանատար գեներալ-ադիւտանտ Լօրիս-Մելիքեան ստանում է Գէորգի II-րդ աստիճանը, որ այդ ժամանակ ամբողջ ոռու զօրքի մէջ միայն 5 գեներալներ ունէին. բացի դա Լօրիսը այս կռուում, որպէս զօրքերի հրամանատարի, ցոյց տւած արտակարգ հմտութեան համար անցնում է ոռու բանակի ամենաաչքի ընկնող ռազմագէտների շարքը: Գալով Ալաշայի կռւին ընդհանուր առմամբ, սա կազմում է պատմութեան մէջ ոռու բանակի ամենափայլուն էջերից մէկը, որի վրայ մեծ ուշադրութեամբ ու կատարեալ հիացմունքով կանգ են առնում պատերազմական ամենաաչքի ընկնող նոյն իսկ օտար հեղինակութիւնները: *)

*) Normann «Armenia and the Campaign of 1877.»

12. Սողանլուխի գորամասը եւ Դէվէ-Բոյնուի՝ առումը

Մուխթարը, կորցնելով իր բանակը, ջարդւած ու լքւած, հոկտեմբեր 3-ի կէս օրին մտնում է Ղարս և հրամայում է բերդապահ զօրքին պաշտպանել բերդը. միաժամանակ, երկիւղ կրելով որ Լօրիսը, օգտւելով յարմար առիթից կարող է իր զօրքերը ուղարկել Սողանլուխի բարձունքները՝ այդտեղից Արզրումի վրայ արշաւելու, յաջորդ օրը հոկտ. 4-ին առաւօտեան շուտ, վերցնելով իր հետ 5 բատալիօն, տաս թնդանօթներով թողնում է Ղարսը և Ենի-Քէօյի վրայով շտապ գնում է դէպի Զիվին՝ միանալու Իսմայիլ-փաշայի զօրամասին, որը, թողած Երևանեան նահանգ, շտապելու էր Զիվին։

Ռուս զօրքը փոխանակ իսկոյն ևեթ հետապնդելու Մուխթարին՝ որին կարելի էր հասնել ճանապարհին, հոկտեմբեր 4-ի օրը կորցնում է նրա վրա, որ անձնատուր եղած թիւրքաց զերիներին է տեղաւորում և ձեռքն ընկած պատերազմական աւարը ցուցակագրում։ Բացի սա կար և այն հանգամանքը, որ ոչ ոք չէր կարծում, որ Մուխթար-փաշան Ղարսի բերդի պաշտպանութիւնը թողած, կհեռանայ դէպի Արզրում. և երբ կէսօրին իմացում է Մուխթարի Ղարսից հեռանալը, անմիջապէս մի զօրամաս բաղկացած 7000 հոգուց 21 թնդանօթներով գեներալ Հէյմանի գլխաւորութեամբ ուղարկւում է Մուխթարի ետևից, պատւիրելով որ սա թոյլ չտայ Մուխթարի զօրքին միանալ Իսմայիլ-փաշայի զօրամասի հետ, այլ ամեն կերպ աշխատի ջարդ տալ օսմանեան բանակի մնացորդներին՝ նախ քան այդ երկու ոյժերը կմիանային։ Նոյն օրը կայանում է զինուորական խորհուրդ, որը և որոշում է՝ ռուս բանակը բաժանել երկու մասերի. մէկը, անլանելով Սողանլուխի զօրամաս գեներալ-լէյտէնանտ Հէյմանի հրամանատարութեամբ, բաղկացած 20 հազար հոգուց



Ղարսը պաշարող և վերցնող
զօրաբանակի հրամանատար
Գեներալ-ադիուտանտ, Գեներալ-լէյտէնանտ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԱԶԱՐԵԱՆ

և 98 թնդանօթներով Սողանլուխով Արզրումի վրայ արշաւելու, իսկ միւսը՝ Ղարսի զօրամաս անւամբ, գեներալ Լազարևի հրամանատարութեամբ՝ բաղկացած 10000 հոգուց 110 թնդանօթներով, ուղարկել Ղարսի վրայ նրան պաշարելու և հարկաւոր դէպքում բերդը գրոհով վերցնելու նպատակով:

Սակայն գեներալ Հէյմանին այնուամենայնիւ չյաջողւեց ի կատար ածել նրան առաջացրած նպատակը՝ այն է թոյլ չտալ Իսմայիլ-փաշայի զօրամասին միանալու Մուխթարի զօրքի հետ: Իսմայիլ-փաշան կատարելով մեծ արագութեամբ տեղափոխութիւններ, Արարատի լանջերից— գրեթէ Բգդիւրի մօտից շտապում է առաջ և հոկտեմբեր 15-ին հասնում է Քեօփրիքեօյ, ունենալով իր թիկունքում Տէր-Ղուկասեանին: Գալով Քեօփրիքեօյ այս զօրամասը միանում է Զիվինից այդտեղ եկած Մուխթար-փաշայի զօրամասի հետ, որով և այս երկու զօրամասերը միասին կազմում են 25 հազարանոց մի բանակ 40 թնդանօթներով: Ահա այդ զօրքերով Մուխթարը գնում է դէպի Հասան-Ղալայ և ասպա այդտեղից հասնում է Դէվէ-Բոյնուի նշանաւոր դիրքերը, նպատակ ունենալով պաշտպանելու այդտեղից Արզրումը ոռուսաց զօրքի յարձակումից:

Դէվէ-Բոյնին իր դիրքով, բարձունքներով և ամրութիւններով համարւում է ոչ միայն Արզրումի բանալին, այլ ընդհանրապէս Անատոլիայի դուռը, ահա թէ ինչու նա վաղուց ի վեր թուրք ռազմագէտների ուշադրութիւնը դարձնելով իր վրայ, մի անառիկ և պատկառելի բերդի կերպարանք էր ստացել և այդ դեռ ևս այս կուից առաջ:

Մուխթարը, ընտրելով այս դիրքը, յոյս ունէր ամրանալ այստեղ և մի ամսի մէջ ստանալով նորանոր ոյժեր, կազմակերպել ուժեղ բանակ և նրանով ոչ միայն ընդդի-

մաղբել ոռւս զօրքին, այլ և դիմել յարձակողական գործողութեան:

Թիւրք երկու զօրամասերի անարգել միացումը շատ վատ տպաւորութիւն թողեց Գլխաւոր Հրամանատարի շտաբում, դա վերագրում էին մի կողմից Հէյմանի, միւս՝ Տէր-Ղուկասեանի դանդաղաշարժութեանը, որ չկարողացան մի քանի ժամ առաջ արգելք լինել այդ միացմանը, որի հետևանքները ծանրանալու էին ոռւս զօրքի առաջիկայ գործողութիւնների վրայ:

Բայց արդէն ուշ էր. մնում էր այժմ մտածել Դէվէ-Բոյնուի ամրութիւններն առնելու վրայ, և գեներալ Հէյման, որին միացել էր Տէր-Ղուկասեանի զօրամասը, հրամայում է ինչ գնով և լինի վերցնել Դէվէ-Բոյնուն՝ յարձակելով նրա ձախ թևի վրայ և, վերցնելով ամրութիւնները, քայլ առ քայլ գրոհ տալ նաև միւս դիրքերի վրայ:

Այս ծրագրով կազմեց ճակատամարտի դիսպոզիցիան. գործողութիւնները սկսելու էին հոկտեմբեր 23-ից:

Այդ օրը կռիւը սկսեց Ուզուն-Ահմէդ ամրութեան վրայ. կռիւն մասնակցում էին Հէյմանի և Տէր-Ղուկասեանի միացեալ զօրամասերը, բաղկացած մօտ 26 հազար հոգուց 104 թնդանօթներով:

Կատաղի գրոհը, որին մասնակցում էին բոլոր զօրքերը իրենց թնդանօթներով, սարսափեցրեց Մուխթարին. սա անասելի եռանդով պաշտպանում էր դիրքերը ոռւսաց զօրքի քաջերի յարձակումներից: Սակայն ոռւսաց զօրքը մեծ յանդգնութեամբ և առանց մի բոպէ կանգ առնելու տւած գոհերի դիմաց, առաջ էր անցնում «ուռայով», քայլ առ քայլ իրար ետևից վերցնում էր ամրութիւններից մերթ այս մերթ այն:

Երեկոյեան ժամ 6-ին մութն արդէն ընկել էր, երբ ոռւս զօրքերը միանալով գրոհով գրաւում են Դէվէ-Բոյնիի գլխաւոր ամրութիւնները, փախուստի ստիպելով թշնա-

մուն, որը իր փրկութիւնը փնտռում էր Արզրումի ամրութիւնների մէջ: Այս նշանաւոր կռուում ոռւսները վերցրին 43 թնդանօթներ, 400 գերի և ահագին քանակութեամբ ռազմամթերք, տալով 126 սպանւած և 564 վիրաւորներ:

Յաղթութիւնը մեծ էր և հետևանքները կարող էին լինել շատ մեծ, եթէ միայն զօրքերի հրամանատարը հոգ տանէր, հալածելով լքւած և փախուստի դիմած զօրքին, նոյն գիշեր յարձակում գործէր Արզրումի վրայ, ուր այդ ժամանակ շտեմնւած իրարացում էր տիրում և քաղաքապահ զօրքը ազգաբնակչութեան հետ միասին պատրաստել էր առանց ընդդիմադրութեան անձնատուր լինելու:

Սակայն այստեղ տեղի ունեցաւ մի խոշոր սխալ. գեներալ Հէյման այդ գիշեր և յաջորդ օրը մնաց Դէվէ-Բոյնիի վրայ և դրանով թոյլ տւեց Մուխթարին, որ սա յուսադրի զօրքին, կազմակերպի քաղաքացիներից ինքնապաշտպանութեան խմբեր և, ամրացնելով Էրզրումի ամրութիւնները, պատրաստել մեծ ու երկարատև ընդդիմադրութեան: Մի քանի օրից յետոյ, 29-ին հոկտեմբերի, երբ գեներալ Հէյմանը ուզեց յարձակել Արզրումի վրայ, համոզեց որ արդէն ուշացել է, ուստի և որոշեց դիմել քաղաքի պաշարմանը, որը տևեց երկար... մի քանի ամիս, որի ընթացքում Սողանլուղի բանակը ստիպւած եղաւ Արզրումի բարձունքներում և Ալաշկերտի դաշտում տիրող անօրինակ սառնամանիքներում գրէթէ առանց պաշարի ձմեռել և տալ անթիւ գոհեր՝ որպէս հիւանդներ ու քաղցածներ:

13. Ղարսի առումը

Գեներալ Յ. Լազարեանին յանձնւած զօրամասը արդէն մօտեցել էր Ղարսին և ձեռնարկել էր իր ծանր և պատասխանատու գործը—այն է նախապատրաստել Ղարսի

բերդի առումը: Դրա համար Լօրիսը մշակել էր երկու ծրագիր. առաջինը՝ Ղարսի խիստ պաշարում ամեն կողմից և ապա՝ որոշ ժամանակից, երբ բերդապահ զորքը և քաղաքի ազգաբնակիչները դրսից օգնական ոյժեր ստանալու մասին յոյսերը կտրած կլինեն, պէտք էր դիմել գրոհին՝ եթէ միայն զորքը ինքը անձնատուր չլինէր: Եւ ահա սկսւում է առաջին ծրագրի իրագործման նախնական քայլերը:

Հոկտեմբերի 18-ից բերդի բոլոր ամրութիւնները միանգամից ենթարկւում են կատաղի ուժեղացումների, որը տևում է մի քանի օր ու գիշեր անընդհատ: Այս բանը քաղաքի խաղաղ ազգաբնակիչներին մէջ առաջ է բերում այնպիսի լքում, որ, ով միայն հնար ունէր փախչելու, փախչում էր՝ չցանկանալով կորցնել ամեն ինչ. միաժամանակ քաղաքացիները դիմում են բերդապահ զորքի գլխավորին՝ Հուսէյին փաշային և խնդրում են համաձայնել անձնատուր լինելու: Իմանալով քաղաքում տիրող այս տրամադրութիւնը, ընդհանուր-հրամանատարը, նախ քան բերդի կրկնակի ուժեղացման դիմելը, պատգամաւոր է ուղարկում Հուսէյն փաշայի մօտ, առաջարկելով, որ նա անձնատուր լինի. սակայն նա այս առաջարկը բաց է ի բաց մերժում է: Այժմ Լօրիսին մնում էր անցնել բուն գործին՝ պաշարմանը, որը, գնալով, ուժեղանում է մանաւանդ բերդի վրայ, երբ ուս զորքին միանում է նաև Արդահանից գեներալ Կամարովի բերած 5000-անոց զորամասը: Բերդի ընդհանուր ուժեղացումը առաջ տանելը յանձնւած էր հայազգի գեներալ Ալիսագեանին, իսկ ամբողջ գործը՝ գեներալ Լազարեանին՝ Լօրիս Մելիքովի գլխավոր ղեկավարութեամբ: Ահա այդ ժամանակ լուր է հասնում, որ Մուխթար փաշայի բանակը Դէվէ-Քօյնի մօտ շարդ է կրել: Յուսալով, որ այդ բանը խորը ազդած կը լինի Ղարսի բերդապահ զորքի վրայ, գլխավոր հրամանատարը այս անգամ արդէն երկրորդ փորձն

է անում, առաջարկելով Հուսէյն-փաշային անձնատուր լինել. սակայն այս առաջարկին բերդապահը նոյն իսկ չի էլ պատասխանում: Դրանից յետոյ Դլխավոր Հրամանատարը պատւիրում է ուժեղացնել Ղարսի ուժեղացումները և դրանով նախապատրաստել նրա վրայ յարձակումը՝ բերդն ու քաղաքն առնելու նպատակով:

Չնայած այն բուն ընդդիմադրութեանը, որ ցոյց էր տալիս թիւրք բերդապահ զորքը, ուս թնդանօթների աւերածութիւնը բերդի և նրա ամրութիւնների վրայ ահագին էր. այժմ մնում էր ձեռնարկել բերդի վրայ միանւագ գրոհին՝ նրան տիրելու համար:

Այդ օրը որոշեց նոյեմբերի 2-ին, որը յետոյ, վատ եղանակներով պատճառով, փոխադրեց նոյեմբերի 5-ից լոյս 6-ի գիշերը:

Բերդը պաշտպանւում էր 19 հազար զորքով 211 թնդանօթներով, իսկ ուսաց բանակը կազմւած էր 32 հազար զորքից մօտ 120 թնդանօթներով. որոշւած էր գրոհի գիշեր ամբողջ ոյժը լարել վերցնելու նախ Ղարադաղի, Սուվարիի, Ղանլիի և Հաֆիսի ամրութիւնները և ապա, փնասելով միջնաբերդը, ազատ պահել խաղաղ քաղաքացիներին ուժեղացումների արհաւիրքից:

Դրոհը, ինչպէս ասեցինք, սկսեց նոյեմբերի 5-ի լոյս 6-ի գիշեր: Լուսնեակ և սառնամանիք գիշեր էր. զօրքը, պատրաստելով վճռական ընդդիմադրութիւն, ապանները պատրաստեցին վերջին նամակները իրենց ընտանիքներին ու սիրելիներին: Եկաւ բանակ գեներալ-ադիւտանտ Լօրիս-Մելիքեան և տեց գրոհի հրամանը: Զօրամասերը գիշերային խաղաղութեան մէջ, սուս ու փուս անցան իրենց դիրքերը և, կէս գիշերից քիչ անց սկսեցին գործողութիւնները բոլոր կողմերից գրեթէ միաժամանակ: Լօրիսը անձամբ լարւած ուղղորդութեամբ գիտում է գրոհին և դիմացի դիրքերից ուղարկում այս ու այն կողմ հրամաններ

ու օգնութիւն: Գրոհը սկսեց գեներալ Լազարեանի գորա-
մասը յարձակելով Դանլիի վրայ. ապա գրաֆ Գրաբբէն՝
Սուվարիի, ապա Թոխմախի, Հաֆիսի, Ֆէզի-Փաշայի և
Ղարադաղի: Բոլոր ամբողջութիւնների վրայ թուրքերը պաշտ-
պանւում էին հերոսաբար, յետ նահանջելով քայլ առ քայլ.
մանաւանդ յամառ դիմադրութիւն ցոյց տւեցին թուր-
քերը Դանլիի և մանաւանդ Արաբիի առման ժա-
մանակ: Քանի գնում էր կռիւն այնքան աւելի կատաղի
կերպարանք էր ստանում:

Զօրքերը հալչում էին իրար ետևից. թշնամին կուրծ-
քը դէմ տւած պաշտպանւում էր, չջանկանալով իրա թի-
կունքը ցոյց տալ: Ռուս գորամասերից մի քանիսը, հերո-
սական ջանքեր թափելով, արդէն յուսահատւում էին և տեղ
տեղ քիչ էր մնում նահանջեն, սակայն գորապետների անձ-
նական օրինակը գալիս էր նոր ոյժ տալու յօգնած զօրքին.
բաղդը փոփոխակի մէկ սրա կողմն էր անցնում մերթ
միւսի: Արդէն լուսանալու մօտ ամբողջութիւններից մէկում
կամ միւսում լււում էր յաղթական «ուռան»: Ընկաւ
Սուվարին, ընկաւ Հաֆիսը, ընկաւ և Դանլին. մնում էր
բերդի բանալին՝ անառիկ Ղարադաղը և նրա ընկեր Արաբը.
շուտով Լօրիսին լուր եկաւ, որ Ղարադաղը նոյնպէս ընկել
է. քաջ գորապետը այժմ միայն ազատ շունչ քաշեց:
Նա դեռ 1855 թւից ճանաչում էր Ղարադաղի դիմացկու-
թիւնը: Այժմ յաղթութիւնը համարում էր գրեթէ տարած.
դիմադրում էր միմիայն Արաբը, սակայն սա էլ լուսը ծա-
գելուն պէս վերջին անգամ առկայծեց և... ընդ միշտ լուեց.
ծածանւեց և սրա վրայ եռագոյն դրօշակը: Յաղթու-
թիւնը ապահովւած էր, անառիկ և անեղ Ղարսը ընկած:
Զօրքի ուրախութեան չափը չկար: Միայն միջնաբերդն էր,
որ մի քանի թոյլ թնդանօթաձգութիւնից յետոյ անձնա-
տուր եղաւ, և ռուս գնդերը, մաս մաս մտնելով բերդ, տիրե-
ցին այն: Մինչ այստեղ ընկնում էր կատաղի բերդը՝ թիւր-

քաց ռազմագիտական ոյժի նշանաւոր կոթողը, միւս կող-
մից նկատւում էր թէ ինչպէս հազարաւոր զօրքեր, օգտուե-
լով մթութիւնից, փախուստի էին դիմում և Արզրումի ճա-
նապարհը բռնում: Լօրիսը իսկոյն հրամայում է կտրել
դրանց առաջը և գերի վերցնել: Մի քանի ժամից ամբողջ
հետևակ զօրքը արդէն բռնւած էր. գերութիւնից ազատ-
ւում է միայն Ղարսի բերդապահ Հիւսէին փաշան, որը
մի քանի ընկերներով աջողեցրեց փախչել Ղարսից, բռ-
նելով Օլթիի ճամբէն և իրանով օրինակ տւեց մնացեալ
զօրքին և թողնելու իրենց դիրքերը:

Նոյեմբերի 6-ի առաւօտեան ժամը 8-ին Լօրիս-Մելի-
քեան իր պահակախմբով ուղևորեց Գլխաւոր Հրամանատա-
տարի մօտ, որը գտնւում էր Ղարսից դուրս, անձամբ գե-
կուցանելու Ղարսի առման մանրամասնութիւններ: Նոյն
օրը ժամը 10-ին նշանակւած էր Մեծ Իշխանի հանդիսաւոր
մուտքը քաղաք. Քաղաքի ազգաբնակչութիւնը ընդառաջել էր
նրան: Ամբողջ զօրքը իրանց գլխաւորներով սպասում էր
իր Հրամանատարին և երբ սա մօտեցաւ քաղաքի մեծ դար-
պասներին, նրան մատուցեցին բերդի բանալիները: Ըն-
դառաջել էր և հայոց առաջնորդ Աղւանեան եպիսկոպոսը
խաչով-խաչվառովը, հայ հոգևորութեան և իրան հոտի հետ:
Այստեղ սա մի զգացւած ճառով ողջունում է ռուս յաղ-
թական զօրքի մուտքը քաղաք և յայտնում հայ ժողովրդի
ռուս տիրապետութեան վրայ դրած յոյսերը:

Արտակարգ հանդիսաւորութիւն է ունենում յաջորդ
օրւան՝ նոյեմբեր 7-ին նշանակւած զօրահանդէսը: Շրջա-
պատւած գեներալիտէտով ու իր շքախմբով գալիս է Մեծ
Իշխան Միխայիլ Նիկօլաևիչը: Շարւած էր ամբողջ զօրքը:
Գլխաւոր հրամանատարը կարդում է Բարձրագոյն հեռա-
գիրը, որով կայսրը շնորհաւորում էր իր զօրքին փառաւոր
յաղթութեամբ և Ղարսի առումով: Թշնամուց խլած թն-
դանօթներից 101 անգամ թողւած ողջոյնի զարկով աւարտ-

ւում է հանդիսաւոր մաղթանք, որից յետոյ կատարւում է հոգեհանգիստ կռում ընկածներէ համար, և ապա սկսւում է պատմական և անմոռաց զօրահանդէսը, որ կառավարում էր գեներալ-լէյտենանտ Լազարեան: Մեծ Իշխանը մի զգացւած ճառով շնորհաւորելով զօրքի տարած մեծ յաղթութիւնը, հերթով երաժշտութեան մարշերի տակ ընդունում է իրան ներկայացնող ամեն մի զօրամասի սպաներին: Հերթը ամենից վերջը հասնում է մօտեցող օրւայ հերոս, յաղթութեան հեղինակ գեներալ-ադիւտանտ Լօրիս Մելիքեանին: Երբ սա հաւասարւում է Մեծ Իշխանին, վերջինս իսկոյն կանգնում է զօրքի շարքի մէջ և, հանելով պատեանից իր սուրը, հրամայում է զօրքին՝ „на караул!“ և խորին յարգանքով ու մեծարանքով գլուխ է տալիս նրան. դրանից յետոյ դառնալով զօրքին Մեծ Իշխանը հրամայում է՝ «Կորպուսի հրամանատարին՝ ուռն»: Սկսւում է անընդհատ ուռն: Լօրիսը, որ չէր սպասում այսպիսի արտակարգ պատիւ, խորապէս զգացւած այս մեծ արտայայտութիւնից, ընկնում է Մեծ Իշխանի գիրկը. սրանք գրկախառնւում և համբուրւում են, իսկ ամբողջ բանակը զգացւած, արտասուքը աչքերին անընդատ ուռն է գոռում: Տեսարանը, ինչպէս նկարագրում են բոլոր մասնակիցները, վերին աստիճան յուզիչ էր և հազւագէտ: Ղարսի առման համար Լօրիսը պարգևատրւում է զինւորական ամենաբարձր շքանշանով՝ այն է Վլադիմիրի առաջին աստիճանով, որ այն ժամանակ ամբողջ ոռու զինւորութեան մէջ ունէին միայն երեք հոգի:

Կարսի առումով կատարւում է Ռուս-Քիւրքական պատերազմի ասիական մասի ամենագլխաւոր գործը: Այնուհետև գալիս է ոռու գեներալ Հեյմանի Դէվէ-Բօյնիի մօտ մնացած զօրամասի կատարեալ նահատակութիւնը, երբ, ինչպէս ասացինք, ոռու զօրքը քաղցի, ցրտի և տիֆի համաճարակին ենթարկւած, մնաց մինչև 1878-ի փետրւարի

8-ը, որից յետոյ Արզրումը ևս ընկաւ պաշարման տակ և ոռու զօրքը նոյն օրը մտնելով Անատօլիայի մայրաքաղաք, գրաւեց ամրութիւններն ու սանձակը:

11-ին փետրւարի Արզրում է գնում Լօրիսը, որին ամբողջ ազգաբնակութիւնը ընդունում է աղ ու հացով և մեծ հանդիսաւորութեամբ: Չհաշւած հազարաւոր զոհերը, այժմ Արզրումում մնում էր տեղ տալ 500 հիւանդի հէնց ոռու զօրքից, չհաշւած քաղաքում եղած անթիւ հիւանդները. տիֆ համաճարակը թէ թիւրքաց և թէ ոռուաց զօրքերում, որպէս և քաղաքի ազգաբնակութեան մէջ, անում էր իր սոսկալի հունձը:

Այժմ մնում էր Լօրիսին մտածել զօրքի առողջապահութեան մասին, որը նոյնքան հոգատարութիւն ու խնամք էր պահանջում, որքան և 1¹/₄ տարի տևող պատերազմը:

14. Պատերազմի վերջը եւ Լօրիսի նրաժառանգանք

Այս գործը ևս կարգադրելով ամենայն բարեխղճութեամբ, Լօրիսը մարտի 14-ին թողնում է Արզրում և գալիս է Ղարս: 26-ին մարտի գեներալ-ադիւտանտ Լօրիս-Մելիքեանը թողնում է իր կորպուսը և, յոգնած, հիւանդ, քայքայւած առողջութեամբ, գալիս է Թիֆլիս:

Ապրիլի 12-ին Նորին Կայսերական Բարձրութիւն՝ Կովկասեան զօրքերի Գլխաւոր Հրամանատարը բաժանում է Կովկասեան ամբողջ զօրքին հետևեալ հրամանը.

«Բարձրագոյն հրամանով այս օրւանից իր հիւանդութիւնից բժշկւելու նպատակով արձակուրդ է ստանում Կովկասեան զօրաբանակի գործող կորպուսի հրամանատար գեներալ-ադիւտանտ Լօրիս-Մելիքեան»:

«Նս հաւատացած եմ, որ ամբողջ Կովկասեան զօրքը բաժանում է ինձ հետ խորը ափսոսանք, որ գեներալ ադիւտանտ Լօրիս-Մելիքեան, թէև ժամանակաւորապէս,

հեռանում է այն շարքերից, որոնց մէջ նրա անունը մըշտապէս կ'մնայ կապած անցեալ պատերազմում գործող բանակի զօրքերի բոլոր քաջարի գործողութիւնների հետ»:

«Լօրիս-Մելիքեան իրեն հաւատացած զօրաբանակի պատմութեան մէջ մտցրել է բազմաթիւ էջեր մի շարք փայլուն գործերի, որոնց մէջ, նա տասնևութ ամիսների ընթացքում, անձամբ բաժանել է զօրքին բաժին ընկած հերոսական աշխատանքն և ծանր զրկանքները. Արդահանի առումը, Ալաշայի բարձունքների ճակատամարտը, Դեմէ-Քօյնուի կռիւր և պատմութեան մէջ անօրինակ Ղարսի գրոհը ընդմիշտ կազմելու են ոռւս զօրքի հպարտութիւնը»:

«Յայտնում եմ նրան հոգուս խորքից բղիւսած երախտազիտութիւնս, ռազմի ընկերների սէրն ու յարգանքը և անկեղծ շնորհակալութիւնը այն զինւորների, որոնք սովորել էին տեսնել կորպուսի հրամանատարին իրանց մասին արած անձանձիր հոգացողութեան ու խնամքի գործի մէջ, թող այդ բոլորը գեներալ-ադիտանտ Լօրիս-Մելիքեանին ծառայեն գրաւականներ այն զգացմունքների, որոնցով կը հանդիպի նրան Կովկասեան Բանակը, երբ վերանորոգւած առողջութիւնը հնար կտայ նրան նորից վերադառնալ զօրքի շարքերի մէջ»:

Սակայն Լօրիս-Մելիքեան Կովկասեան Բանակի շարքերի մէջ նորից չվերադարձաւ: Ամենափայլուն կերպով աւարտելով այն մեծ և պատասխանատու գործը, որ զրւած էր նրա վրայ ոռւս-տաճկական պատերազմին և, արժանանալով սրա համար Բարձրագոյն արտակարգ պարգևների այն է՝ Ղարսի առման համար Վլադիմիրի I-ին աստիճանի շքանշանին, իսկ ապրիլի 16-ին իր ամբողջ գործունէութեան ու ծառայութեան համար՝ ոռւս կայսրութեան Կոմսի կոչումին, նա նշանակւում է Սունջիի-Վլադիկաւկազեան գնդի շէֆ: Դրանից յետոյ, փոխանակ հանգստի, որին ծարաւի էր, Լօրիսը հրաւիրում է ծա-

ռայութեան ուրիշ, աւելի մեծ, աւելի պատասխանատու գործերի համար, վայելելով Բարձրագոյն վատահութեան այնպիսի ապացոյցներ, որպիսիք եզակի են ոռւսաց ամբողջ պատմութեան մէջ:

Լօրիս-Մելիքեանի գործունէութեան այդ շրջանը դուրս լինելով մեր նպատակից, բնականաբար, բաց ենք թողնում, և աւարտում Ռուս-տաճկական պատերազմի և Լօրիսի կենսագրութեանը նւիրած այս համառօտ պատմութիւնը այն եզրակացութեամբ, որ անում է գեներալ Քիշմիշև այս պատերազմի հետեանքների մասին: «Մեր նորատի, բարձր քաջութեամբ և նոյնքան բարոյական բարձր առաքինութիւններով օժտւած զօրքի գործադրած բոլոր ջանքերի արդիւնքը եղան՝

ա) Ղարսի, Աջարիայի և Բաթումի շրջանների միացումը Ռուսաստանի հետ:

բ) Երկու առաջնակարգ բերդերի (Ղարսի և Արդահանի) գրոհով վերցնելը:

գ) Թշնամուց 504 թնդանօթներ, բազմաթիւ գէնք, ռազմամթերք և պետական գոյքի գրաւումը:

դ) Գերումը թշնամու մօտ 20,000 զինւորների, 1200 հոգի շտաբ և աւագ սպաների ու 16 փաշաների»:

Եթէ դրանց վրայ աւելացնենք, որ այսբոլոր պատերազմների, ճակատների, գրոհների մէջ ոռւս զօրքը թըշնամուն չթողեց և ոչ մի հատ թնդանօթ, զրօշակ ու ռազմամթերք, բացի մի քանի հարիւր գերիներից, այն ժամանակ պարզ կլինի ոռւս քաջ զինւորութեան և նրան արժանի զօրապետների, որոնց մէջ կորպուսի հրամանատար գեներալ ադիտանտ, կաւալերիայի գեներալ կոմս Միխայիլ Լօրիս-Մելիքեանի կատարած դերը ոռւսաց զօրքի պատմութեան մէջ ընդհանրապէս և թիւրքաց դէմ վարած այս կռիւններում մասնաւորապէս:

Ապագայ պատմագրին է մտում աւելի մանրամասն կանգ առնել հայազգի տաղանդաւոր ռազմագէտ և պետական նշանաւոր զործիչ Լօրիս-Մելիքեանի բարոյական ներքին յատկութիւնները վրայ, որոնց մէջ անկեղծ սէրը դէպի հասարակ զինուորը, սրան խնամելն ու սրա մասին հոգալը զօրաբանակի հրամանատարի համար զարձել էր աւելի պատւաւոր և պատասխանատու գործ, քան թշնամու անառիկ բերդերն առնելը, բանակները ջարդելն ու գերիներ վերցնելը:


Այդ յատկութիւններով Լօրիսը նոյն իսկ ուն ջրանձնէր ու բարոյական բանակի մէջ բռնում է իր ամենապատւաւոր տեղը, յատկութիւններ, որոնցով ամենայն իրաւամբ կարող է պարծենալ որքան ուն բանակը, նոյնքան և այն ժողովուրդը, որի հարազատ ծնունդն ու զաւակն էր գեներալ ազիւտանտ Միքայէլ Լօրիս-Մելիքեանը:

Մ. ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎԻ ԱՍՏԻՃԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՐԳԵՒՆԵՐԸ

Աստիճաններ

Պարգևներ

22	տարեկան	Գվարդիայի պօրուչիկ	—
24	»	հապիտան	Ստանիսլաւ II աստ.
26	»	Մայօր	Ոսկէ թուր.
29	»	—	Վլադիմիր 4-րդ աստ.
29	»	Գնդապետ	Վլադիմիր 3-րդ աստ.
30	»	»	—
31	»	»	—
32	»	Գեներալ մայօր	Ստանիսլաւ I-ին աստ.
37	»	Գեներալ լէյտնանտ	Աննա I-ին աստ.
41	»	Գեներալ-ազիւտանտ	Վլադիմիր II-րդ աստ.
42	»	Գեներալ կաւալերիայի	Ալեքսանդր Նեակիյ
51	»	Կորպուսի հրամանատար	Գէորգիի II-րդ աստ.
52	»	—	Վլադիմիր I աստ.
53	»	Կոմս	Շէֆ-գնդի:
54	»	Խարկովի գեն. նահանգապ.	Սպիտակ Արծիւ I աստ.
55	»	Ներքին գործերի մինիստր	—



Յ Ա Ն Կ

ԵՐԵՍ

	Առաջաբան	3
Գլուխ	1. Պատերազմի պատճառները և պատ- րաստութիւնները	4
»	2. Լօրիս-Մելիքեան մինչև 1877—1878-ի պատերազմը	8
»	3. Պատերազմի սկիզբը և զեներալ Լօրիս- Մելիքեանի առաջին քայլերը	17
»	4. Թիւրքաց բանակը Ղարսում	18
»	5. Ռուսաց բանակը Ղարսի դիմաց և Կադ- զանի առումը	22
»	6. Արդահանի պաշարումը և առումը	25
»	7. Ռուսաց զօրքի առաջխաղացումը և Ղարսի առաջին պաշարումը	33
»	8. Արշաւանք դէպի Չիվին և վերադարձ	36
»	9. Ռուսաց զօրքի նահանջը	37
»	10. Ալաշայի կռւի սկիզբը	39
»	11. Ալաշայի վճռական ճակատամարտը	42
»	12. Սողանլուսի Զօրամասի Դէվէ-Ֆօյունիի առումը	48

»	13.	Ղարսի առումը	51
»	14.	Պատերազմի վերջը և Լորիս-Մելիքեանի հրաժարականը	57
		Լորիս-Մելիքեանի աստիճանաւորութիւն	60

Ն Կ Ա Ր Ն Ե Ր

1.	Գեներալ ազիւտանտ Մ. Լորիս-Մելիքեան:	
2.	Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչ:	
3.	Գեներալ լէյտենանտ Արշակ Տէր-Ղուկասեան:	
4.	Գեներալ ազիւտանտ Յովհաննէս Լազարեան:	
5.	Ռուս-տաճկական պատերազմական բեմի քար- տէգը	61



50

3p

2 entef.
1755

1755

7013

